Կանայք Հայաստանի տեղական ինքնակառավարման մեջ

Կովկասի Ինստիտուտի առցանց հրապարակում

№ 6. Դեկտեմբեր 2011

Հեղինակ – Հրանտ Միքաելյան

Հետազոտող խումբ – Էլլա Կարագուլյան, Զարուհի Հարությունյան, Մարգարիտա Զախարյան

Ծրագրի ղեկավար – Նինա Իսկանդարյան

Գիտական խմբագիր – Ալեքսանդր Իսկանդարյան

“Կանայք Հայաստանի տեղական ինքնակառավարման մեջ” նախագիծը սոցիոլոգիական հետազոտություն է, որի նպատակն է ուսումնասիրել կանանց ներգրավվման մակարդակը Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մեջ, սահմանել տեղական ինքնակառավարման համակարգում կանանց մասնակցությունը մեծացնելու և գենդերային անհավասարությունը հարթելու համար բարենպաստ և անբարենպաստ գործոնները:

CAUCASUS INSTITUTE
www.caucasusinstitute.org

UNDP

HEINRICH BÖLL STIFTUNG
SOUTH CAUCASUS

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ 3

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4

Տվյալների պահոց 4
Դաշտային աշխատանք 6

ԿԱՆԱՅՔ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ 9

Գենդերային դերեր 9
Կանայք աշխատանքային շուկայում 10
Կինը քաղաքականության մեջ 11

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 15

Տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում 15
Գյուղապետի և համայնքային խորհրդի իշխանության հարաբերակցությունը 16
Կանանց մասնակցության աստիճանը տեղական ինքնակառավարմանը 19

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ ԿԱՆԱՆՑ ՑԱԾՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ 23

Գենդերային դերեր: Ընտանեկան կարգավիճակ 23
Գենդերային կարծրատիպեր 25
Իշխանության անփոփոխությունը 28

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵՋ ԿԱՆԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ 31

Աշխարհագրությունը նշանակություն ունի՞ 31
Տնտեսվարության տեսակ 33
Գյուղերի ազգագրական հատկանիշները և նրանց ազդեցությունը քաղաքական մշակույթի վրա 35
Էլիտաների իներցիա 39
Կա՞ն արդյոք վարչական խոչընդոտներ 40
Տնտեսությունը կարո՞ղ է ամեն ինչ 40
Սյունիքում հարևան “նահապետական” և “մայրիշխանական” համայնքների երկճյուղավորումը 42

ԿԻՆԸ – ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 45

Դիմանկար 45
Ընդհանրացում. ընտրման ուղի և հետագա գործունեություն 47

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ 49

Կարճաժամկետ հեռանկարով. 49
Երկարաժամկետ հեռանկարով. 50

ՆԱԽԱԲԱՆ

Առցանց հրապարակումների այս թողարկման մեջ ձեր ուշադրությանն ենք ներկայացնում 2011թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Կովկասի Ինստիտուտի կողմից ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (UNDP) և Հայնրիխ Բյոլլ հիմնադրամի աջակցությամբ անցկացված հետազոտական նախագծի արդյունքները:

Երիտասարդ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է քաղաքացիական հասարակության կառուցման շրջանում, և այս գործընթացը ուղեկցվում է որոշակի դժվարություններով: Անկախության ձեռքբերումից 20 տարի անց երկրի կառավարման գործընթացին կանանց ներգրավվածության աստիճանը շարունակում է շատ ցածր մնալ:

Կին գործարարների թիվը փոքր է: Վարչական պաշտոններում, այդ թվում նաև տեղական ինքնակառավարման համակարգում, կանայք էլ ավելի քիչ են: Եվ, եթե երկրի կտրվածքով կանանց զբաղվածության մակարդակը այդքան էլ ցածր չէ, ապա նրանց ներկայությունը ղեկավար պաշտոններում համարյա աննկատ է: Սույն հետազոտությունը դիտարկում է Հայաստանի տեղական ինքնակառավարումը գենդերային տեսակետից:

Այսպիսի անհավասարության պատճառները բազմազան են, և հետազոտական աշխատանքի ավարտին աշխատանքային խումբը եկավ երբեմն անսպասելի և առարկայի մասին սկզբնական մակերեսային պատկերացումները հերքող հետաքրքիր եզրահանգումների:

Հետազոտությունը անցկացրել է Կովկասի Ինստիտուտի երիտասարդ հետազոտողների խումբը՝ Էլլա Կարագուլյանը, Զարուհի Հարությունյանը և Մարգարիտա Զախարյանը՝ Հրանտ Միքաելյանի ղեկավարությամբ: Ծրագրի ղեկավար՝ Նինա Իսկանդարյան: Գիտական խմբագիր՝ Ալեքսանդր Իսկանդարյան:

4 Մեթոդաբանություն

Հետազոտությունը իր մեջ ներառում է տեղական ինքնակառավարման մեջ կանանց ներգրավվածության աստիճանը ուսումնասիրելու համար հարկավոր նյութերի հավաքում և վերլուծություն, կանանց ավելի մեծ ներգրավմանը խոչընդոտող կամ այն խթանող գործոններ և գյուղական համայնքային հասարակություններում կնոջ դերի մասին պատկերացումների համակարգ:

Հետազոտության առաջին շրջանում պարզվեց, որ իրավիճակը քաղաքային և գյուղական համայնքներում խիստ տարբեր է, և երկրի 49 քաղաքներից ոչ մեկում կին քաղաքապետ չկա: Այսպիսով, քաղաքներում ղեկավար պաշտոններում կանանց բացակայությունը իրենից ներկայացնում է առանձին հետազոտության թեմա, և մենք որոշեցինք հետազոտել փոքր ու միջին գյուղական համայնքներ՝ մինչև 5000 մարդ առկա բնակչությամբ:

Հետազոտության ընթացքում կազմվեց 2005թ.-ից անցկացված բոլոր ընտրությունների տվյալների պահոց. բացի դրանից անցկացվեց ավելի քան 90 կիսակառուցվածքային հարցազրույցներ [1] և 10 ֆոկուս-խումբ: Բացի դրանից մենք հավաքեցինք և վերլուծեցինք այլ երկրների տվյալներ գենդերի ու տեղական ինքնակառավարման ոլորտներում:

Տվյալների պահոց

Տվյալների պահոց ստեղծվեց երկու ֆորմատով – Excel և SPSS: Ամբողջ ունեցած տվյալները ընդհանրացվում և պահոցի մեջ էր ներառվում, որպեսզի հետագայում հնարավոր լինի այդ ամենը օգտագործել թե' որակական, թե' քանակական վերլուծությունում:

Պահոցը կազմվում էր ըստ Հայաստանի Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի[2] կայքի ՏԻՄ/մարզի անվանում բաժնում եղած տվյալների: Կայքում ներկայացված են բոլոր ընտրությունների արդյունքները՝ սկսած 2005թ.-ից: Նոր ընտրություններ անցկացնելիս տվյալներն ամեն օր թարմացվում է: Տեղեկատվական պահոցում ընդհանուր ընտրությունների քանակը մոտ 3500 է:

Տվյալները պահոց էին անցկացվում համաձայն անցկացված ընտրությունների. յուրաքանչյուր ընտրությունը զբաղեցնում է աղյուսակի մեկ տող: Տվյալները անցկացվում էին մի քանի բլոկով. ա) ընդհանուր տեղեկատվություն ընտրությունների մասին, բ)

[1] Կիսակառուցվածքային հարցազրույցները սոցիոլոգիայում դրանք այնպիսի հարցազրույցներն են, որոնցում նախատեսվում է տեսակետների և հարցերի պարտադիր ցանկ, որոնց վերաբերյալ պետք է ստացվի տեղեկատվություն, սակայն դրա հետ մեկտեղ զրույցը վարվում է ազատ, իսկ հարցերը տրվում են ճշտումների ձևով:

[2] Հայաստանի Կենտրոնական Ընտրական Հանձնաժողով / URL: [http://elections.am]

տեղեկատվություն ընտրությունների արդյունքների մասին, գ) տեղեկատվություն հաղթողի մասին, դ) տեղեկատվություն բնակավայրի մասին: Հարկ է նշել, որ Հայաստանում անցկացվում են ընտրությունների երկու տեսակ՝ համայնքի առաջնորդի (ղեկավարի) ընտրություն և ավագանու խորհրդի անդամների ընտրություն: Քանի որ համայնքի ղեկավարի և խորհրդի անդամների ընտրությունները, որպես կանոն, անցկացվում են միաժամանակ, դրանք ընդգրկված են մեկ աղյուսակի մեջ:

Ընտրությունների մասին ընդհանուր տեղեկատվությունը իր մեջ ներառում է հետևյալ տվյալները. ընտրությունների անցակցման ամսաթիվ (տարի և ամիս), ընտրությունների անցկացման մարզի և բնակավայրի անվանում, ընտրությունների տեսակ (ավագանու խորհրդի կամ համայնքի ղեկավարի ընտրություններ), ընդհանուր մասնակիցների և կին մասնակիցների քանակ (ավելի հաջողակ կանանց համար ծանոթագրության մեջ նշվում էին որոշ կենսագրական տեղեկություններ):

Ընտրությունների արդյունքների բլոկը իր մեջ ներառում էր. ընտրություններին մասնակցած ընտրողների քանակը, մասնակցությունը ընտրություններին,[3] գենդերային տվյալներ, համայնքի ղեկավարի ընտրությունների դեպքում՝ հաղթողի սեռը, իսկ ավագանու խորհրդի անդամների ընտրության դեպքում՝ խորհուրդ անցած տղամարդկանց և կանանց քանակը: Կանանց մասնակցության դեպքում նշվում էր ընտրություններում նրանց հավաքած ձայների ընդհանուր տոկոսը:

Հաղթողի մասին տեղեկատվությունը կազմված էր հաղթողի անուն ազգանունից, նրա տարիքից (մինչև 2007 չէր հրապարակվում), կուսակցական պատկանելությունից և ընտրություններում հավաքած ձայների տոկոսից: Քանի որ սեռական պատկանելության մասին տեղեկատվությունը չէր հրապարակվում, իսկ հայոց լեզվում ազգանունները չեն վերափոխվում կախված սեռից, ապա հաղթողի սեռը որոշվում էր armenian.name կայքի օգնությամբ, որտեղ կար ավելի քան 1000 հայկական անունների պահոց:

Բնակավայրի մասին տեղեկատվությունը ներառում էր առկա բնակչությունը, առկա բնակչությունում կանանց մասնաբաժինը և տղամարդկանց արտագաղթի ինդեքսը, որը հաշվարկված էր մեր կողմից առկա բնակչությունում տղամարդկանց քանակի և մշտական բնակչությունում տղամարդկանց քանակի հարաբերակցության տարբերության հիման վրա[4]: Այս գործակիցը տղամարդկանց մոտ համարյա բոլոր դեպքերում գերազանցում է նմանատիպը կանանց մոտ, հաճախ մի քանի անգամ: Որոշ բնակավայրերում կարող է

[3] Մինչև 2006թ. ներառյալ կայքում հասանելի էր տեղեկատվություն ընտրողների և օգտագործմանը պատրաստ ընտրաթերթիկների ընդհանուր քանակի մասին, իսկ 2007թ.-ից սկսած ընտրողների մասին տեղեկատվությունը անհայտացավ, այնպես որ մասնակցությունը հաշվարկվում էր ընտրաթերթիկների քանակից ելնելով:

[4] Աղյուսակ 1.1. Առկա և մշտական բնակչությունը վարչատարածքային բաժանումով և սեռով / 2001թ.-ի մարդահամարի տվյալներ/ Հայաստանի Ազգային Վիճակագրական Ծառայություն (ՀՀ ԱՎԾ) / URL: [http://docs.armstat.am/census/pdfs/11.pdf] (հայ., անգլ., ռուս.)

բացակայել ցուցակային տղամարդկանց բնակչության մինչև մեկ երրորդը, իսկ կանանց մոտ այդ տարբերությունը կկազմի մոտ 10%:

Որպես առկա բնակչության մասին տեղեկատվություն մենք օգտագործել ենք 2001թ.-ի մարդահամարի տվյալները՝ այն համարելով միակ հարաբերականորեն ճշգրիտ տեղեկատվություն համայնքների բնակչության մասին, քանի որ Հայաստանում ոչ միշտ է ճշգրտորեն հաշվարկվում արտագաղթը, իսկ մշտական բնակչության մասին տեղեկությունները իրենց մեջ ներառում են մարդկանց, ովքեր հաշվետվության գրման պահին բացակայում են մինչև 15 տարի, հաճախ՝ հեռացել են ընդմիշտ: Դրա հետ մեկտեղ 2001թ.-ի վերջից արտագաղթային կորուստը փոխհատուցվել է բնական աճով[5].

Դաշտային աշխատանք

Գյուղական համայնքներում մենք անցկացրեցինք մի քանի տասնյակ կիսակառուցվածքային հարցազրույց համայնքների ղեկավարների, ընտրություններում իրենց հակառակորդների, տեղի բնակիչների և այլոց հետ:

Հետազոտության առաջին շրջանում ուսումնասիրվեցին տեղական ինքնակառավարման մեջ կանանց առկայության վիճակագրական տվյալները Հայաստանի շրջաններով: Պարզվեց, որ Լոռիում և Սյունիքում կանանց մասնաբաժինը նկատելիորեն մեծ է, քան միջինը երկրով մեկ, իսկ Արարատում, Վայոց Ձորում, Արագածոտնում և Կոտայքում՝ նկատելիորեն փոքր:

Դաշտային աշխատանքների համար մենք ընտրեցինք Լոռին և Սյունիքը, որպես մարզեր, որտեղ կանանց մասնակցությունը չափազանց բարձր է և Արարատը, որտեղ կանայք տեղական ինքնակառավարման մեջ համարյա բացակայում են:

Մեր հարցման մասնակիցներին պայմանականորեն կարելի է բաժանել 5 խմբի:

- Ընտրություններին հաղթած և համայնքներում ղեկավար պաշտոններ զբաղեցնող կանայք: Հարցվել են Յաղդան, Բազում, Մեղվահովիտ, Պաղաղբյուր, Վերին Դվին, Հացավան, Քարահունջ, Շրվենանց համայնքների ղեկավարները,
- կանայք, ովքեր նախկինում ղեկավարել են համայնքները կամ առաջադրել են իրենց թեկնածությունը ընտրություններին, բայց պարտություն են կրել (գյուղեր Աշոտավան, Նորամարգ, Դվին, Սարատովկա, Լոռի Բերդ, Քարաձոր),

[5] Արտագաղթի տվյալներ տես.: Միջազգային ուղևորափոխադրումներ ըստ ամիսների և փոխադրամիջոցների / ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայություն / URL: [http://smsmta.am/?menu_id=19] (հայ.)
Ծնելիության և մահացության մասին տեղեկատվություն տես.՝աղյուսակ 1.5. Հայաստանում բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշներ / Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2010, էջ 27 / URL: [http://armstat.am/file/article/demos_11_2.pdf] (հայ., անգլ.)

- համայնքների տղամարդ ղեկավարներ,
- տղամարդիկ, ովքեր նախկինում ղեկավարել են համայնքները կամ առաջադրել են իրենց թեկնածությունը ընտրություններին, բայց պարտություն են կրել
- գյուղի բնակիչներ. գյուղերից յուրաքանչյուրում անցկացվել է 3-5 այդպիսի հարցազրույց:

Այցելության համար համայնքներն ընտրվում էին հետևյալ սկզբունքով.

- համայնքներ, որոնց ներկա ղեկավարը կին է,
- առաջին խմբին հարևան համայնքներ, որոնց ղեկավարները տղամարդիկ են,
- համայնքներ, որտեղ ընտրություններում կին թեկնածու կար;
- կանանց զրոյական ներկայացուցչությամբ համայնքներ:

Մենք կազմեցինք 5 տեսակի հարցաթերթիկ-ձեռնարկներ 5 տարբեր հարցազրույց տվողների 5 կարգերի համար:

- կին – համայնքի ղեկավար,
- կին – համայնքի ղեկավարի պաշտոնի թեկնածու,
- տղամարդ – համայնքի ղեկավար,
- տղամարդ – համայնքի ղեկավարի պաշտոնի թեկնածու,
- համայնքի բնակիչ,

Համայնքի ղեկավար կանանց հարցաթերթիկները իրենց մեջ ներառում էին համայնքի մասին հարցեր՝ տնտեսվարության տեսակ, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և այլ իրավիճակ, քաղաքական պայքարին միանալու պահը, երբ և ինչպես է կայացվել որոշումը, ինչպիսին էր ծրագիրը և ինչքանով է հաջողվել այն իրականացնել, քաղաքական պայքարի ընթացքի նկարագրությունը, հակառակորդների բնութագրերը, հասարակության վերաբերմունքը տարբեր թեկնածուներին, արտաքին ազդեցություն. ինչպիսին էր ընտանիքի, համայնքային վարչակազմի և այլոց վերաբերմունքը այն փաստին, որ համայնքի ղեկավար կին կընտրվի, գենդերային պրակտիկա. ինչքանով է կինը ընդգրկված այդ գյուղերի հասարակական կյանքում և ինչքանով է իրավիճակը տարբերվում հարևան համայնքներից, ինչպես նաև անձնական և կենսագրական հարցերի բլոկ:

Մենք ընտրեցինք 19 համայնք, այդ թվում 9-ը՝ Լոռիում, 5-ը՝ Սյունիքում և 5-ը՝ Արարատում:

Լոռի

- Յաղդան
- Բազում
- Քարաձոր

- Ազնվաձոր
- Մեծավան
- Պաղաղբյուր
- Մեղվահովիտ
- Լոռի Բերդ
- Սարատովկա

Արարատ

- Դվին
- Վերին Դվին
- Վերին Արտաշատ
- Նորամարգ
- Սայաթ-Նովա

Սյունիք

- Աշոտավան
- Հացավան
- Խնձորեսկ
- Քարահունջ
- Շրվենանց

Ընդհանուր առմամբ անցկացվել է մոտ 90 կիսակառուցվածքային հարցազրույց և 10 ֆոկուս-խումբ:

Կանայք ժամանակակից հասարակությունում

Գենդերային դերեր

Պատմականորեն մարդկային հասարակության համար բնորոշ էր գենդերային դերերի բաժանումը: Իգական (կանանց) գենդերային դերը զուգորդվում է արտահայտչականությամբ և քնքշությամբ՝ կանանց պարտադրելով լինել հոգատար, դյուրահույզ և զգայուն այլ մարդկանց խնդիրներին: Արական (տղամարդկանց) գենդերային դերը զուգորդվում է գործիքայնությամբ (գործարարություն, պրագմատիզմ, արտաքին կողմնորոշում), անկախությամբ և հարձակողականությամբ՝ տղամարդուց պահանջելով ակտիվություն, գերակշռում և պատվախնդրություն[6]: Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ տարբեր հասարակություններում սահմանված գենդերային դերերի բևեռացման աստիճանը տարբեր է:

Սոցիալական պահելակերպի տարբերությունների հետ մեկտեղ, գենդերային դերերը կանխորոշում են նաև աշխատանքի բաժանումը: Այսպես, ագրարային հասարակություններում տղամարդը զբաղվում է գյուղատնտեսական արտադրությամբ առևտրական ծավալներով՝ տղամարդիկ մշակում են հողը, զբաղվում են ոռոգմամբ և ապրանքը արտահանում են շուկա: Նրանք ունեն և վաճառում են խոշոր կենդանիներ՝ պատասխանատու լինելով նաև անտառներում բնափայտի մթերման, մշակման և վաճառքի համար:

Գյուղի կանայք պատասխանատու են առաջին հերթին տնային տնտեսության համար: Նրանք դաստիարակում են երեխաներին, նախապատրաստում են մթերքը և պատրաստում ուտելիք, զբաղվում են տնային թռչնաբուծությամբ, ինչպես նաև նախապատրաստում են վառելանյութ և ջուր՝ մասնակցելով նաև դաշտային աշխատանքների՝ ցանքի, քաղհանման, բերքահավաքի և մշակման ժամանակ, ինչպես նաև վերջինիս վաճառքի նախապատրաստման գործընթացին[7]:

Տղամարդու՝ որպես ընտանիքը սնուցողի գերադասելի դերը, այսօր էլ տարածված է Հարավային Կովկասում, չնայած իրականությունը տարբեր աստիճանով նկատելիորեն հակադրվում է սպասումներին:

---

[6] Պետք է նշել, որ համեմատելով տղամարդկանց և կանանց բնավորությունները, Հայաստանի գյուղերում անցկացված հարցումների ընթացքում մեզ հաճախ էին հանդիպում գենդերային դերերի համապատասխանություններ:

[7] Ի՞նչ է գենդերը / ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն / URL: [http://www.fao.org/gender/gender-home/gender-why/ru/] (ռուս)

Աղյուսակ 1. Ո՞վ պետք է լինի ընտանիքի սնուցողը:/Ո՞վ է երկրի ընտանիքների մեծամասնության սնուցողը: CRRC-ի հարցում, 2010[8]

	Ո՞վ պետք է լինի (%)			Ո՞վ է (%)		
	տղամարդ	կին	հավասար	տղամարդ	կին	հավասար
Ադրբեջան	84	0	16	75	6	17
Հայաստան	85	1	14	65	17	17
Վրաստան	83	2	14	36	39	20

Այսպիսի տրամադրություններ բնորոշ են ոչ միայն Հարավային Կովկասին: Օրինակ, հարցումները Մեծ Բրիտանիայում ցույց են տալիս, որ չնայած դինամիկային, ընտանիք կերակրող տղամարդիկ ավելի շատ են, քան կանայք, իսկ կին տնային տնտեսուհիները մոտ տաս անգամ ավելի շատ են, քան տղամարդիկ[9]:

Ավանդականորեն տղամարդու դերը ենթադրում է աշխատանք տնից դուրս, իսկ կնոջ դերը՝ հիմնականում տանը: Տղամարդու դերին վերաբերում է նաև ղեկավարող դերը, հենց այս պատճառով է, որ հասարակություններում, որոնք առանձնանում են ավելի արտահայտված գենդերային դերերով, կինը պետք է ընդունի տղամարդու գենդերային դերին բնորոշ մի շարք առանձնահատկություններ ղեկավար դառնալու համար:

Կանայք աշխատանքի շուկայում

Ինչպես տեսնում ենք, այն պայմաններում, երբ տղամարդուց ակնկալում են լինել ընտանիքի սնուցողը, սպասելի է, որ տղամարդը կձգտի զբաղեցնել ավելի եկամտաբեր դիրքեր, մանավանդ, որ դա ակնհայտորեն կամ ոչ ակնհայտորեն խրախուսվում է հասարակության կողմից[10]:

Վերջին տասնամյակներում արտադրողական հարաբերություններում տեղի է ունենում ավանդական գենդերային աշխատանքի բաժանման էրոզիա՝ թուլացնելով գենդերային դերերի երկճյուղավորվածությունն ու բևեռացումը[11]: Կանայք վարպետանում են «տղամարդկանց մասնագիտություններում»՝ տղամարդկանց հետ հավասարվելով իրենց կրթության մակարդակով և այլն:

---

[8] How Does the South Caucasus Compare? p.3-4 / Caucasus Research Resource Centers. Oct. 5, 2011 / PDF файл. URL: [http://www.crrccenters.org/store/files/Reports/How%20Does%20the%20South%20Caucasus%20Compare.pdf] (անգլ.)

[9] The rise and rise of Mrs Breadwinner: One in five women are main or sole earners as more fathers stay at home / Daily Mail Online, Oct. 29, 2010 / URL: [http://www.dailymail.co.uk/news/article-1324645/Fathers-stay-home-women-main-sole-earners.html] (անգ.)

[10] Օրինակ, Հայաստանում CRRC –ի հարցվածների 62% կարծում է, որ տղամարդը պետք է աշխատանքի տեղավորման ավելի մեծ իրավունքներ ունենա, և ընդամենը 35% արտահայտվում է դրա դեմ:

[11] Маскулиность как история / И. С. Кон. Меняющиеся мужчины в изменяющемся мире/ URL: [http://www.owl.ru/library/047t.htm]

Ժամանակակից աշխատանքային շուկան մինչ այժմ ցուցադրում է բավականին նկատելի բևեռացում: Որոշ ոլորտներում կանանց ներկայությունը գերակայող է, մյուսներում՝ համարյա աննկատ: Մեծ է կանանց ներգրավվածությունը կրթության ոլորտում, սակայն, նույնիսկ այստեղ է ակնհայտ անհավասարությունը:

Այսպես, օրինակ, ԱՄՆ-ում կանանց քանակը դպրոցի ուսուցիչների մեջ կազմում է 86%. արդեն ավագ դպրոցում այդ թիվը կրճատվում է մինչև 60, իսկ բարձրակարգ կրթական հաստատությունների դասախոսների մեջ կանանց թիվը արդեն 46% է [12] : Այդ հարաբերակցությունը մոտ է համաշխարհայինին: Հայաստանում կանանց ներգրավվածությունը կրթական համակարգին էլ ավելի մեծ է՝ դպրոցում այն մոտենում է 100%-ի, իսկ համալսարաններում՝ 59%-ի[13].

Մասնագետների և տեխնիկական աշխատողների մեջ կանայք նույնպես գերակայում են. Հայաստանում նրանք կազմում են 65%, ԱՄՆ-ում՝ 55%, իսկ բարձր օղակի պաշտոնյաների և թոփ-մենեջերների շարքերում գերակայում են տղամարդիկ (կանայք կազմում են 24% Հայաստանում և 43%՝ ԱՄՆ-ում):

Անհամաչափությունը կարող է պատկերել նաև հետևյալ փաստը: Ռուսաստանի կրթական համակարգում, ինչպես և ամբողջ հասարակությունում, կանայք կազմում են 52%: Բայց ավելի մանրամասն զննումից հետո մենք տեսնում ենք, որ ռեկտորների մեջ կանայք կազմում են 7%, պրոռեկտորների և մասնաճյուղերի տնօրենների մեջ՝23%, ֆակուլտետների դեկանների մեջ՝31%, իսկ ավագ դասախոսների, դասախոսների և օգնականների մեջ՝68%[14]:

Այսպիսով հաստատվում է այն ենթադրությունը, որ տղամարդիկ գերակշռում են այն ոլորտներում, որոնք կապված են ավելի բարձր շահութաբերության և սոցիալական հեղինակության հետ, ինչը նրանցից պահանջում է իրենց գենդերային դերը: Եվ չնայած կանանց ներկայացուցչությունը գնալով մեծանում է, մինչ այժմ ոչ մի երկրում չկա հավասարություն բոլոր ոլորտներում, որը արդի է դարձնում համաշխարհային մակարդակով դրան հասնելու հնարավորության հարցը:

Կինը քաղաքականության մեջ

Ղեկավար պաշտոնները ավանդականորեն համարվում էին տղամարդկանց հայրենակալվածքը: Դա հատկապես վերաբերում է քաղաքականությանը: Առանձին պատմական անձանց բացառությամբ մինչև XX դարը, կանայք չէին կարող անմիջական

[12] United States – Contry Profile / Gender Gap Report 2011, p. 345 / World Economic Forum / URL: [http://www3.weforum.org/docs/WEF_GenderGap_Report_2011.pdf] (անգլ.)
[13] Armenia – Country Profile / Gender Gap Report 2011, p. 97 / World Economic Forum / URL: [http://www3.weforum.org/docs/WEF_GenderGap_Report_2011.pdf] (անգլ.)
[14] Распределение по полу профессорско-преподавательского персонала государственных высших учебных заведений, на начало 2003/04 учебного года, % / Работа: а счастье в труде? / «Гендер для чайников», էջ. 134. Москва, 2006, Фонд имени Генриха Белля. (ռուս.)

մասնակցություն ունենալ քաղաքականությանը և դա կարող էին անել միայն անուղղակի՝ իրենց համար գտնելով համապատասխան ամուսին կամ կազմակերպելով սոցիալական շարժում[15]:

Որոշ ուշացումով գենդերային դերերի փոփոխման գործընթացը ընթանում է նաև քաղաքական ոլորտում: XX-րդ դարում երկրների մեծամասնություններում ընդունվեցին օրենքներ, որոնք կանանց տվեցին ձայնի և ընտրվելու իրավունք: Որոշ երկրներում պետությունների ղեկավարներ դարձան կանայք, իսկ վերջին ժամանակներս որոշ երկրներում խրախուսվում է կանանց ծավալուն ներգրավվումը քաղաքականության մեջ կրթական քաղաքականության, քվոթայացման և այլ միջոցներով:

Հիմնականում, խոսելով քաղաքականության մեջ կանանց ներգրավման մասին, ուշադրություն է դարձվում խորհրդարանին: Հայաստանի խորհրդարանում այս պահին 131 պատգամավորների թվում կա ընդամենը 12 կին, այսինքն՝ 9%-ից քիչ ավել: Խորհրդարանում կանանց ներկայացուցչության համաշխարհային միջին ցուցանիշը կազմում է բոլոր պատգամավորների 18%-ը, բայց զգալիորեն տարբերվում է տարբեր երկրներում. եթե որոշ երկրների խորհրդարաններում կին պատգամավորներ չկան, ապա երկու երկրներում (Անդորրա և Ռուանդա) նրանք կեսից շատ են:

Սակայն հետաքրքիր են նաև այլ ցուցանիշները: Այդպես աշխարհում 20 նախարարից միայն երեքն են կին: Տարբերությունը մեծ է և այստեղ: Ֆինլանդիայի կառավարությունը բաղկացած է հիմնականում կանանցից, իսկ Քաթարի կառավարությունում կանայք չկան: 18 հայ նախարարներից երկուսը կին են[16]: Բնորոշող է, որ երկուսն էլ զբաղվում են սոցիալական և մշակութային հարցերով (Մշակույթի և Սփյուռքի հարցերի նախարարություններ) և այն, որ համաձայն հարկային հայտարարագրերի նրանց եկամուտը միջինում ավելի ցածր է, քան իրենց գործընկերներինը[17]:

Ներկայացնենք Հայաստանի պետական իշխանության համակարգի և կարևորագույն պաշտոնների գենդերային կազմը:

Աղյուսակ 2. Կանայք և իշխանությունը Հայաստանում, վիճակագրություն

---

[15] МАСКУЛИННОСТЬ И ФЕМИНИННОСТЬ, էջ. 2 / Энциклопедия Кругосвет / URL: [http://www.krugosvet.ru/enc/nauka_i_tehnika/biologiya/MASKULINNOST_I_FEMININNOST.html?page=0,1]] (ռուս.)

[16] Ամբողջական ցանկը տես. World Leaders / CIA / URL: [https://www.cia.gov/library/publications/world-leaders-1/world-leaders-a/armenia.html] (անգլ.)

[17] տես. ՀՀ բոլոր նախարարների գույքի և եկամուտների հայտարարագրերի մասին 2010թ.-ի տեղեկանքներ / Անկախ տեղեկատվության կենտրոն / URL: [http://www.foi.am/u_files/file/naxararner_2010.doc] (հայ.)
Глава Минздрава лидирует по доходам среди министров Армении / Кавказский узел, 09 сен. 2011 / URL: [http://www.kavkaz-uzel.ru/articles/192293/] (ռուս.)

	2010[18]			2008[19]		
	կին	տղ	% կին	կին	տղ	% կին
Քաղաքականություն, պետության կառավարում						
... Խորհրդարան	12	119	9.2%	11	120	8.4%
... Նախարարներ, փոխնախարարներ	8	70	10.3%	5	66	7.0%
... Դեսպաններ, Դիվ. ներկայացուցչությունների ղեկավարներ	0	34	0.0%	1	25	3.8%
... Ավագ պաշտոններ, քաղ. ծառայություն	15	128	10.5%	14	115	10.9%
... Նախագահի աշխատակազմ	133	206	39.2%	108	190	36.2%
... Կառավարության աշխատակազմ	172	282	39.0%	113	158	41.7%
Տեղական ինքնակառավարում, մարզ. վարչակազմեր						
... Մարզպետներ	0	10	0.0%	1	9	10.0%
...Մարզպետների տեղակալներ, մարզ. վարչակազմերի ղեկավարներ	3	41	6.8%	4	37	9.8%
... Մարզ. վարչակազմերի աշխատակազմեր	492	748	39.7%	499	774	39.2%
Երևանի քաղաքապետարան						
... Երևանի քաղաքապետարան, ավագ պաշտոններ[20]	6	84	6.7%	4	203	1.9%
... Երևանի քաղաքապետի աշխատակազմ	162	207	43.9%	120	151	44.3%
...Շրջանների քաղաքապետարանների աշխատակազմեր	623	685	47.6%	763	825	48.0%
Դատական իշխանություն, պետական մակարդակ						
... Դատավորներ	45	166	21.3%	46	170	21.3%
... Դատապաշտպաններ	380	638	37.3%	319	543	37.0%
... Սահմանադրական դատարանի անդամներ	1	8	11.1%	0	9	0.0%
Այլ						
...Պետ. համալսարաններում գիտական խորհուրդներ	263	342	43.5%	220	613	26.4%
... Կենտրոնական բանկի խորհրդի անդամներ	1	4	20.0%	2	3	40.0%

Աղյուսակ 3. Նախարարություններում կին աշխատակիցներ[21]

[18] Women and men in Armenia հավաքածուի տեղեկությունների հիման վրա, 2011. P. 142-155 / National Statistical Service of Armenia. Ереван, 2011 (հայ., անգլ.)

[19] Women and men in Armenia հավաքածուի տեղեկությունների հիման վրա, 2009. P. 104-110 / National Statistical Service of Armenia. Ереван, 2009 (հայ., անգլ.)

[20] Ի նկատի ունենք: Երևանի քաղաքապետ, Երևանի քաղաքապետի տեղակալ, քաղաքապետարանի խորհուրդ, քաղաքապետարանի վարչակազմի ղեկավար, վարչական շրջանի ղեկավար, , վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, ավագանու խորհուրդ

[21] Women and men in Armenia, 2011. P. 150 / National Statistical Service of Armenia. Ереван, 2011 (арм., англ.)

Կրթության և գիտության նախարարություն	67.2
Սփյուռքի հարցերի նախարարություն	61.5
Առողջապահության նախարարություն	58.9
Մշակույթի նախարարություն	54.8
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	53.7
Արտաքին գործերի նախարարություն	53.2
Էկոնոմիկայի նախարարություն	51.9
Պաշտպանության նախարարություն (միայն քաղաքացիական)	50.7
Տարածքային կառավարման նախարարություն	50.5
Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	48.9
Ֆինանսների նախարարություն	48.3
Բնապահպանության նախարարություն	46.8
Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	44.4
Արդարադատության նախարարություն	43.0
Քաղաքաշինության նախարարություն	35.7
Արտակարգ իրավիճակների նախարարություն	35.4
Տրանսպորտի և կապի նախարարություն	31.0
Գյուղատնտեսության նախարարություն	27.1

Տեղական ինքնակառավարումը Հայաստանում

Տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում

Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգը ստեղծվեց 1995թ.-ին պետական համակարգին զուգընթաց՝ Սահմանադրության ընդունումից հետո: Տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրությունները անցկացվեցին 1996թ-ին[22]:

Տարածքային կառավարման համակարգը բաղկացած է մի քանի մակարդակից: Սահմանադրությանը համաձայն Հայաստանը կազմված է 10 մարզերից (շրջաններից) և հատուկ վարչական միավոր՝ քաղաք Երևանից: Մարզպետները (շրջանների ղեկավարները) նշանակվում են նախագահի կողմից: Մարզերը կիսվում են քաղաքային և գյուղական համայնքների: Հայաստանում կա մոտ հազար բնակավայր, որոնք միավորված են 926 համայնքի, որոնցից 48-ը քաղաքային են, 866-ը՝ գյուղական[23], ինչպես նաև ք. Երևանի 12 շրջանային համայնքներ, որոնք հանդիսանում են տեղական ինքնակառավարման մարմիններ:

Տեղական ինքնակառավարման մարմինը դա համայնքային խորհուրդն է (ավագանի) և համայնքի ղեկավարը (առաջնորդ), որոնք ընտրվում են ամեն 4 տարին մեկ (մինչև 2008թ. ընտրությունները անց էին կացվում երեք տարին մեկ): Խորհրդի անդամների քանակը կախված է համայնքի բնակչության քանակից և կարող է կազմել 5-ից 15 հոգի:

Համայնքի նկատմամբ պետական քաղաքականության պարագայում, օրինակ, համաձայն ֆինանսական հավասարեցման օրենքի, համայնքային դրամաշնորհների որոշման ժամանակ որոշակի նշանակություն ունի բնակչության քանակը: Բացի դրանից, նշանակություն ունի համայնքի վայրը, ըստ որի, որոշվում է վերջինիս սահմանամերձությունը և/կամ իր լեռնային կամ բարձր լեռնային համայնքի կարգավիճակը[24]:

Չնայած պաշտոնապես մարզպետի լիազորությունները սահմանափակված են համայնքի մակարդակի գործադիր իշխանության գործունեության համակարգմամբ, փորձը ցույց է տալիս, որ իրականում մարզպետը ունի ավելի շատ իշխանություն: Հաշվի առնելով համայնքների ֆինանսական թուլությունը՝ պարզ է դառնում, որ այն մի քանի լծակը, որն ունի մարզպետը՝ համայնքի զարգացման գերակայությունը, նպաստների բաշխումը, ձեռք են բերում նշանակալի դեր տեղական ինքնակառավարման մեջ մարզպետի իշխանության

---

[22] Տեղական ինքնակառավարման համակարգ / Տարածքային կառավարման նախարարություն ՊԱ / URL: [http://www.mta.gov.am/ru/the-lsg/]

[23]տես. POPULATION OF THE REPUBLIC OF ARMENIA / Marzes of the Republic of Armenia and Yerevan city in figures, 2011. P. 18 / National Statistical Service of Armenia. Ереван, 2011 (հայ., անգլ.)

[24] Tumanyan D. Local Government in Armenia / Local Governments in Eastern Europe, in the Caucasus, in the Central Asia / URL: [http://lgi.osi.hu/publications/2001/84/Ch-6-Armenia.pdf]

ամրապնդման գործում[25]: Մարզպետի ոչ պաշտոնական իշխանությունը հիմնված է նաև իր՝ համայնքի ղեկավարին պաշտոնանկ անելու և ժամանակավոր տեղակալներ նշանակելու իրավունքի վրա:

Քանի որ տեղական ինքնակառավարման համակարգը Հայաստանում ստեղծվում է ընտրության հիման վրա, դա նշանակում է, որ համայնքային իշխանության մարմինների գործունեությունը պետք է իրականացվի ժողովրդավարության սկզբունքների հիման վրա, իսկ տեղեկան իշխանության մարմինները ներկայացնեն համայնքի հետաքրքրությունները: Գործնականում իրավիճակը տարբեր համայնքներում տարբեր է, ինչը առաջին հերթին կախված է անցկացված ընտրությունների որակից: Այսպիսով, տեղական ինքնակառավարումը իրենից ներկայացնում է հատուկ, պետականից տարբերվող, կառավարման տեսակ:

Տեղական ինքնակառավարման համակարգը մինչև հիմա գտնվում է ձևավորման ընթացքի մեջ: Եթե որոշ համայնքներում տեղական ինքնակառավարումը գործում է հաջողակ և լուծում է տեղական խնդիրները, ինչպիսիք են օրինակ ջրամատակարարումը, գյուղական ճանապարհի ասֆալտապատումը, գազաֆիկացումը և այլն, ապա մյուսներում առայժմ ընկալված չէ տեղական իշխանության անհրաժեշտությունը, իսկ բնակչությունը հույսը դնում է կենտրոնական իշխանության նպաստների կամ միջազգային կազմակերպությունների օգնության վրա:

Գյուղապետի և համայնքային խորհրդի իշխանության հարաբերակցությունը

Տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի կառուցման նախագահական մոդելի սահմաններում Հայաստանում տարածված է “ուժեղ գյուղապետ-խորհուրդ” համակարգը: Գյուղապետը ունի աշխատակազմ (տեղակալ, քարտուղար, հաշվապահ և այլ աշխատակիցներ, թվով 2-ից 7, կամ ավելի):

Համայնքային խորհուրդը (ավագանու խորհուրդ) նախատեսված է զսպումների և հակակշիռների համակարգի դերը կատարելու համար: Գյուղապետի և համայնքային խորհրդի խորհրդակցությունները անցկացվում են շաբաթը մեկ անգամ և դրանց ընթացքում պետք է քննարկվեն ու լուծվեն բյուջետային հարցեր և զարգացման գերակայություններ:

Համայնքային խորհուրդը հիմնականում ընտրվում է քաղաքապետի հետ միասին՝ նույն ժամկետով: Փոքր համայնքներում (1000 բնակչից քիչ) ավագանու խորհրդի քանակը, որպես կանոն, կազմում է 5 մարդ, միջիններում՝ 1000-ից 3000 բնակչությամբ՝ 7, խոշորներում՝ 11000-ից ավել՝ 11, իսկ քաղաքային տիպի համայնքներում՝ 15:

---

[25] Татевик Маркарян. Формальные и неформальные практики местного самоуправления в Армении / Идентичность, власть и город в работах молодых ученых Южного Кавказа, сборник статей. Стр. 276 / HeinrichBollStiftung, Тбилиси, 2005

Ի տարբերություն գյուղապետի աշխատակազմի, համայնքային խորհուրդի աշխատակիցները չեն վարձատրվում: Ըստ էության համայնքի ղեկավարը գործադիր իշխանության ղեկավարն է. բաշխում է բյուջեի ծախսերը, որոշում է համայնքի զարգացման գերակայությունները:

Հաճախ ավագանու խորհրդի անդամները չեն գիտակցում իրենց իրական լիազորությունները: Մեր կողմից այցելված բոլոր համայնքներում չափահաս բնակիչները ոչ միայն գիտեին գործող ղեկավարին, այլ նաև հիշում էին նախորդին: Որոշ դեպքերում անդամակցությունը համայնքային խորհրդի մասնակիցների կողմից ընկալվում է միայն որպես ինչ-որ արտոնյալ կարգավիճակ՝ ապահովելով նրանց գերակայությունը բարիքների բաշխման մեջ, ինչը չի ընդունվում բնակիչների կողմից և նպաստում է տեղական ինքնակառավարման վարկածի տապալմանը:

> *“... [Ո]ր ավագանի են լինում, ... գիտեն արտոնություն է դա, որ հատուկ պետք է օգտվեն, ես տարիներ առաջ, երբ աշխատում էի, ծրագրեր ունեի, դրանց վիճակահանության, ասենք, ամբողջ գյուղին չէր բավարարում, էդ ավագանու կին թեկնածուներից մեկը, բա. «ես ավագանու անդամ եմ, ես ինչի՞ պետքա վիճակահանություն քաշեմ, իմը պետքա առանց հերթ լինի»:”*
>
> **Տղամարդ. Քարաձոր (Լոռի) համայնքի նախորդ ղեկավար, թեկնածու վերջին ընտրություններում**

Սակայն, քանի որ տեղական ինքնակառավարման մասին օրենքը պահանջում է, որ գյուղապետի բյուջետային քաղաքականությունը հաստատվի նաև խորհրդի կողմից, ինչպես նաև մարզպետների և կենտրոնական իշխանությունների պահանջների հիման վրա, պաշտոնապես համայնքային խորհուրդը գործում և վերընտրվում է բոլոր համայնքներում և միշտ չէ, որ հնարավոր է հասկանալ, թե որտեղ է այն լի իրական բովանդակությամբ, իսկ որտեղ՝ գյուղապետի աշխատակազմի հավելում է: Այն համայնքներում, որտեղ ավագանու խորհուրդը չի ձևավորվում ներքևից պահանջի հիման վրա, այն աշխատում է մարզպետի և կենտրոնական իշխանությունների առջև գյուղապետի հաշվետվության համար: Մի շարք դեպքերում գյուղապետը համոզելով է բնակիչներին սատարում մասնակցել համայնքային խորհրդի աշխատանքներին[26], իսկ մյուսներում հնարավորինս խոչընդոտում են մասնակցությանը:

[26] Հաճախ դա խնդիր է, քանի որ համայնքում չի հավաքվում համայնքային խորհրդում մասնակցել ցանկացողների հարկավոր քանակ

"... Համայնքի ղեկավարին ձեռք չի տալիս, որ կին ընդունեն ավագանի: Երեք հոգի ա ընտրում, պիտի հինգ հոգի լինի: Եվ բացի դրանից սահմանադրություն գոյություն ունի: Ես զարմանում եմ, թե ինչի են դեմ գնում էդ սահմանադրությանը, պատճառաբանելով՝ թեկնածուներ չկան: Շատ կան: Ուղղակի գաղտնի են անում: Հետո ընտրության օրը ասում են երկու թեկնածու կա: Ստիպված պիտի ընտրեն:"

Կին. Աշոտավան (Սյունիք) համայնքի նախորդ ղեկավար, թեկնածու վերջին ընտրություններում

Հարկ է նշել, որ նույն համայնքի ղեկավարը հայտարարեց, որ «առանց համայնքային խորհրդի այսօր հնարավոր չէ ոչ մի հարց լուծել»

Սակայն երկու մոդելներում էլ («ընդգրկման» և «բացառման») համայնքային խորհուրդը մնում է գյուղապետի թիմը և, ի վերջո, բաղկացած է գյուղապետին հավատարիմ մարդկանցից: Ավագանու խորհրդի անդամների ընտրություններում մրցակցությունը, որպես կանոն, ցածր է. հազվադեպ չեն դեպքերը, երբ չկա ոչ միայն խորհրդում մասնակցության համար պայքար, այլ առկա է մասնակիցների պակաս: Մյուս դեպքերում այն ընտրությունները, որոնք ունեին կոշտ մրցակցություն, 3-4 տարի հետո նոր ընտրություններում մրցակցություն արդեն չեն ունենում, ինչը կարող է բացատրվել թե՛ տեղում համակարգի վարկածի անկումով, թե՛ դրա հանդեպ հետաքրքրության կորստով, և թե՛ գործող խորհրդի մասնակիցների և համայնքի ղեկավարի կողմից մրցակցության սահմանափակմամբ: Ավագանու խորհրդի բարձր ակտիվության մասին մեզ հայտնում էին բավականին հազվադեպ, մեր կողմից այցելված համայնքների մոտավորապես մեկ չորրորդում (պետք է նշել, որ ընտրությունը ներկայացուցչական չէ ամբողջ երկրի համար):

Որպես համակարգի հանդեպ ցածր վստահության հետևանք, ավագանու խորհրդի ընտրություններին մասնակցությունը ցածր է այն դեպքերում, երբ ավագանու խորհրդի ընտրությունները անց են կացվում գյուղապետի ընտրություններից առանձին: Ի դեպ, այս փաստը կարող է բացատրվել, օրինակ, սեզոնային արտագաղթի փաստով: Օրինակ, 2008թ.-ի հոկտեմբերի 12-ին Արարատյան Մարզի Այգեստան համայնքում անցկացվեցին ավագանու խորհրդի ընտրություններ: Ընտրություններին մասնակցեցին 192 ընտրող և օգտագործվեց ընտրաթերթիկների միայն 9%-ը [27] : Ընդամենը երկու շաբաթ անց, հոկտեմբերի 26-ին Այգեստանում կայացան համայնքի ղեկավարի ընտրություններ, որոնցում մասնակցեց 1319 մարդ և օգտագործվեց ընտրաթերթիկների 60%-ը: Այս դեպքը ծայրահեղներից մեկն է, քանի որ ակտիվության մեջ տարբերությունը յոթնապատիկ է, որը բացատրվում է նաև համայնքի ղեկավարի ընտրությունների բարձր մրցակցությամբ (4

[27] 2007թ-ից Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը դադարեց հրապարակել տվյալներ համայնքներում ընտրողների քանակի մասին, այսպես որ այն որոշվում էր միայն անուղղակիորեն՝ընտրատարածք բերված հարցաթերթիկների քանակի հիման վրա: Դա բերում է մասնակցության թվի խեղաթյուրմանը մի քանի տոկոսով, քանի որ պատրաստվող ընտրաթերթիկների քանակը, որպես կանոն, ավելի մեծ է, քան հարկավոր է ընտրությունների համար:

թեկնածու) և դրանց լրիվ բացակայությունը Ավագանու խորհրդի ընտրություններին (7 տեղին առաջադրվել էր 6 թեկնածու): Սակայն գրեթե ամենուրեք իրավիճակը կրկնվում էր և գյուղապետի ընտրություններին ակտիվությունը ավելի բարձր էր[28]:

Ինչ վերաբերում է գյուղապետին, ապա օրենքում սահմանված չէ համայնքի ղեկավարի ընտրման ժամկետների առավելագույն քանակը, այդ պատճառով, որոշ համայնքներում ղեկավարները չեն փոխվել 15 տարի և ավելի: Դրան նպաստում են Հայաստանի բնակչության ինչպես նաև այլ "սոցիալիստական անցյալով" երկրների ավանդույթները, ուր առկա է իշխանության՝ այդ թվում և համայնքային, ու համապատասխանաբար՝ պատասխանատվության անձնավորումը: Այս դեպքերում տեղի է ունենում ղեկավարման անձնավորում, ինչը բերում է գործադիր իշխանության ակնհայտ գերակայությանը, իսկ ներկայացուցչական մարմինները կարող են դառնալ վարչակազմի անսահման իշխանության համար "ժողովրդավարական" պատվար[29]:

Ոչ պաշտոնական հարաբերությունները կարող են դառնալ տեղական ինքնակառավարման համակարգի կարգավորման հզոր մեխանիզմ, այդ թվում՝ հակասելով օրենքով սահմանված նորմերին: Այդ պատճառով "Կանայք Հայաստանի տեղական ինքնակառավարման մեջ" հետազոտությունում մեծ ուշադրություն է դարձվում ոչ պաշտոնական պրակտիկային՝ որպես կանանց մասնակցության վրա մեծ ազդեցություն ունեցող գործոնի: Հեղինակներից մեկը առանձնացրել է համայնքում ժամանակակից իրավիճակի որոշիչ գործոնների երեք խումբ[30].

- մշակութային առանձնահատկություններ, որոնք պատմականորեն կապված են տեղական հին ավանդույթների հետ,
- առօրյան կարգավորող ոչ պաշտոնական սովետական ժամանակների նորմեր,
- հետսոցիալիստական պայմաններ, որոնք ստիպում են մարդկանց փնտրել նոր հարմարվողական ռազմավարություններ:

Կանանց մասնակցության աստիճանը տեղական ինքնակառավարմանը

Առկա սահմանադրությունը ոչ մի կերպ չի սահմանափակում, բայց նաև չի սատարում կանանց մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը: 2011թ-ի սկզբի դրությամբ ցածրագույն մակարդակի տեղական ինքնակառավարման մեջ՝ ներառյալ քաղաքային և գյուղական համայնքները, նրանց վարչակազմերը, ինչպես նաև

[28] Դեպքերի մեծամասնությունում տարբերությունը կազմում է 20-50%, հասնելով երկակիի:
[29] Заключение. Выводы. / Диссертация. Ваге Манукян. Местное самоуправление и областное управление в Республике Армения. Москва, 2007 / URL: [http://www.dissercat.com/content/mestnoe-samoupravlenie-i-oblastnoe-upravlenie-v-respublike-armeniya]
[30] Татевик Маркараян. Формальные и неформальные практики местного самоуправления в Армении / Идентичность, власть и город в работах молодых ученых Южного Кавказа, сборник статей. էջ. 263 / HeinrichBollStiftung, Тбилиси, 2005

ավագանիները (համապատասխանաբար ներառյալ Երևանը և շրջանների մակարդակը), ընդգրկված է 17561 մարդ, որոնցից 4 665 (28.2%) կին են:

Սակայն ավելի մանրակրկիտ ուսումնասիրությունը ակնհայտ է դարձնում կանանց անհավասար ներկայացուցչությունը իշխանության տարբեր մակարդակներում: Աչքի են ընկնում նաև աշխարհագրական տարբերություններ (շրջաններում), բնակավայրի չափսի տարբերություններ և այլն: Աղյուսակ 4-ը ներկայացնում է տեղական ինքնակառավարման մեջ կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը:

Աղյուսակ 4. Կանայք և տղամարդիկ Հայաստանի տեղական ինքնակառավարման մեջ

	Համայնքների վարչակազմեր			Ավագանի			Ավագ պաշտոնյաներ[a]			Համայնքների ղեկավարներ		
	կ	տ	%	կ	տ	%	կ	տ	%	կ	տ	%
Արագածոտն	271	393	40.8	13	613	2.1	0	69	0.0	0	114	0.0
Արարատ	632	636	49.8	22	663	3.2	5	48	9.4	1	96	1.0
Արմավիր	354	439	44.6	17	710	2.3	3	96	3.0	4	93	4.1
Գեղարքունիք	256	572	30.9	50	579	8.0	6	69	8.0	3	89	3.3
Լոռի	525	500	51.2	89	575	13.4	13	65	16.7	6	107	5.3
Կոտայք	461	541	46.0	29	460	5.9	8	54	12.9	1	66	1.5
Շիրակ	667	646	50.8	46	612	7.0	4	65	5.8	2	117	1.7
Սյունիք	462	293	61.2	84	493	14.6	31	70	30.7	4	105	3.7
Վայոց Ձոր	232	666	25.8	9	314	2.8	2	15	11.8	1	43	2.3
Տավուշ	322	313	50.7	26	395	6.2	2	42	4.6	2	60	3.2
Ընդհանուր	4182	4999	45.6	385	5414	6.6	74	593	11.1	24[b]	890	2.6

[a] Ներառյալ համայնքների ղեկավարների տեղակալները և համայնքի վարչակազմը

[b] 2011թ-ի վերջի դրությամբ այս թիվը կրճատվել է մինչև 22

Ավագանում կանանց մասնակցության աստիճանը ներկայացված է վերս, սակայն նպատակահարմար է գյուղական և քաղաքային խորհուրդներում կանանց մասնակցության մասին տվյալները ներկայացնել առանձին:

Աղյուսակ 5. Կանանց մասնակցությունը քաղաքապետարանների խորհուրդներում

	Քաղաքային խորհուրդներ			Գյուղական խորհուրդներ		
	կ	տ	%	կ	տ	%
Արագածոտն	2	30	6.3	11	583	1.9
Արարատ	1	52	1.9	21	611	3.3
Արմավիր	0	41	0.0	17	669	2.5

Գեղարքունիք	3	56	5.1	47	523	8.3
Լոռի	8	68	10.5	81	507	13.8
Կոտայք	4	77	4.9	25	383	6.1
Շիրակ	1	36	2.7	45	576	7.3
Սյունիք	0	79	0.0	84	414	16.9
Վայոց Ձոր	1	32	3.0	8	282	2.8
Տավուշ	3	54	5.3	23	341	6.3
Ընդհանուր	23	525	4.2	362	4889	6.9

Ինչպես երևում է, կանանց մասնակցության աստիճանը քաղաքներում և գյուղերում բավականին ակնհայտորեն տարբերվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարելի է բացատրել վիճակագրական սխալով (Օրինակ, Արագածոտնում՝ քաղաքների փոքրության պարագայում, ընդամենը 2 կին կազմում են քաղաքային խորհրդի ավելի քան 6%-ը):





Ինչպես երևում է նշված գծագրերից, եթե քաղաքապետարաններում կանայք և տղամարդիկ ներկայացված են գրեթե հավասար թվով, ապա այլ ոլորտներում անհավասարությունը շատ մեծ է և առավելագույնի է հասնում ամենաբարձր պաշտոններում՝ համայնքի ղեկավարների մեջ, որտեղ միայն ամեն 40-րդ քաղաքապետարանն է ղեկավարվում կնոջ կողմից: Սակայն մանրակրկիտ զննումը ցույց է տալիս, որ այդ կանանց 2.6% ներկայացված են ոչ այդքան լավ պաշտոններում: 48 քաղաքապետներից ոչ մեկը կին չէ: 2011թ.-ի սկզբի դրությամբ կանանց կողմից ղեկավարվող 24 համայնքները ունեին 2500-ից փոքր բնակչություն: Այսպիսով, կարելի է խոսել այն մասին, որ “ապակյա առաստաղը”, այսինքն շեմը, որից հետո կանանց ակտիվությունը հավասարվում է զրոյի, և նրանք կարող են հանդիպել բազմաթիվ անսպասելի խոչընդոտների, կայանում է հենց բնակչության այդ քանակի մեջ:

Աղյուսակ 4-ը ցույց է տալիս, որ կանանց մասնակցությունը հասարակական կյանքին առավել նկատելի է Լոռի և Սյունիք մարզերում: Ապա միջին ցուցանիշներով հետևում է Գեղարքունիքը, Շիրակը, Տավուշը, նրանցից էլ ավելի հետ են մնում Արմավիրը և Կոտայքը, իսկ Արարատում, Արագածոտնում և Վայոց Ձորում կանանց մասնակցությունը ամենափոքրն է: Ակնհայտ է, որ այստեղ դեր է խաղում այն փաստը, որ Շիրակը, Տավուշը, Գեղարքունիքը, Լոռին և Սյունիքը հեռու են մայրաքաղաքից և տնտեսության տեսակետից ավելի քիչ են զարգացած, իսկ այն մարզերը, որտեղ կանանց մասնակցությունը միջինից ցածր է, ավելի զարգացած են տնտեսապես և ավելի մոտ են երկրի կենտրոնին:

Հաշվի առնելով այն, որ իրավիճակը քաղաքային տեղական ինքնակառավարման մեջ զգալիորեն տարբերվում է գյուղական տեղական ինքնակառավարումից, ակնհայտ է, որ այս երկու թեմաները իրենցից ներկայացնում են երկու տարբեր հետազոտությունների առարկա, իսկ այս հետազոտությունը կենտրոնացած է գյուղական ինքնակառավարման մեջ կանանց դերի ուսումնասիրման վրա:

Հասարակական կյանքում կանանց ցածր մասնակցության պատճառները

Գենդերային դերեր: Ընտանեկան կարգավիճակ

Հայկական գյուղական համայնքներում գենդերային բաժանման աստիճանը բավականին բարձր է և առաջին հերթին երևում է տնտեսվարության մեջ: Իդեալական է համարվում ընտանիքի այն տեսակը, որտեղ առաջնորդում և որոշումները կայացնում է տղամարդը՝ ընտանիքի հայրը: Կնոջ դերը խիստ փոփոխվում է համայնքից համայնք (այդ մասին «Տեղական ինքնակառավարման մեջ կանանց ներգրավման վրա ազդող գործոններ» բաժնում) և կարող է տատանվել տղամարդուն հավասարից մինչև ենթարկվողը, սակայն ընդհանուր առմամբ ոչ մի տեղ ղեկավարի դերը չի կազմում Հայաստանում իգական դերի մի մաս և հաճախ հակառակում է դրան:

Գյուղերի տղամարդ բնակիչների պատկերացմամբ «իդեալական ընտանիքում» տղամարդը ընտանիքի ապրուստի համար հարկավոր միջոցների վաստակողն է: Նա աշխատում է դաշտում և տանը կատարում է վերանորոգման աշխատանքներ: Կանանց այս մոդելում ամրագրվում է դաստիարակել երեխաներին, հետևել տնային տնտեսությանը և հողատարածքին՝ չնայած որ կանայք հաճախ օգնում են իրենց ամուսիններին դաշտային աշխատանքներում: Աշխատել[31] կնոջը չի արգելվում, եթե դա կես դրույքի աշխատանք է: Կնոջ լրիվ դրույքով աշխատելու ցանկությունը կարող է հանդիպել ամուսնու կամ ընտանիքի տարիքով մեծ անդամների ընդդիմությանը: Այսպիսով, կինը հիմնականում տնտեսապես կախված է ամուսնուց, ինչը բերում է ընտանիքում ընդհանուր կախվածության վիճակի:

Որոշ դեպքերում մեզ հետ հարցազրույց անցնող կանայք իրենք էին պատասխանելու հնարավորությունը տրամադրում իրենց ամուսիններին (այսպիսի դեպքերը հազվադեպ էին՝ մոտ ամեն 5-7-րդը այդ դեպքերից, երբ կինն ու ամուսինը հարցազրույցի ժամանակ գտնվում էին նույն սենյակում), երբեմն նրանց պատասխանները գենդերային խնդիրներին վերաբերող հարցերին կախված էին նրանից՝ գտնվում է ամուսինը սենյակում, թե ոչ: Սակայն ավելի հաճախ կանայք արտահայտում էին սեփական տեսակետը անկախ ամուսնու դիրքորոշումից, և դա ավելի բնորոշ էր Լոռիում և Սյունիքում հարցվածների համար, ի տարբերություն Արարատի, որտեղ տղամարդը ընտանիքում ուներ ավելի մեծ իշխանություն:

[31] Հարկ է նշել, որ ինչպես պարզվեց հարցումների արդյունքում, «աշխատանք» բառի տակ գյուղի բնակիչները հիմնականում հասկանում են քաղաքային տիպի ֆիքսված աշխատանքի ժամերով գործ՝ դպրոցում, պետական ծառայությունում, տնտեսական ընկերություններում, գործարաններում և արտադրամասերում:

Սակայն հարկ է նշել, որ տվյալ «իդեալական ընտանիքը» հաճախ անհնարին է դառնում ստեղծել ինչպես աղքատության, այնպես էլ տղամարդու բացակայության պատճառով: Հայկական գյուղերում հաճախ է նկատելի սեռերի թվաքանակի անհավասարությունը: Չնայած նրան, որ ծնելիության ժամանակ տղաների քանակը մեծ է աղջիկների քանակից[32], արդեն չափահասների խմբում համամասնությունը փոխվում է աղջիկների օգտին, իսկ միջին տարիքային խմբերում (35-55 տարեկան) անհավասարությունը ավելի է մեծանում և կանանց թիվը կարող է գերազանցել տղամարդկանց թվին 20-40%-ով: Տղամարդ բնակչության «լվացումը» բացատրվում է ոչ թե կյանքի տևողության տարբերությամբ, ինչպես մի շարք այլ հետսովետական երկրներում, այլ արտագաղթով: Ընտանիքներ, որտեղ բացակայում է տղամարդը, բնական ձևով խիստ տարբերվում են նկարագրված «իդեալականներից»: Սակավահողության պատճառով բազմաթիվ տղամարդիկ գյուղատնտեսությունից ստացած եկամուտով ընտանիք պահելը համարում են անհնար կամ անբավարար և ներգրավվում են սեզոնային (ճոճանակային) միգրացիայի մեջ[33], ինչը ստեղծում է «կանանց գյուղերի» ֆենոմենը[34]: Այսպիսի գյուղերում կանայք հաճախ համատեղում են ինչպես դաշտային աշխատանքները, այնպես էլ տնային տնտեսությունը՝ իրենց վրա վերցնելով ամբողջ պատասխանատվությունը:

Այնուամենայնիվ, «կանանց գյուղերը» բացառություն են, ոչ թե կանոն, քանի որ դրանք կազմում են Հայաստանի բոլոր գյուղերի 1%-ից քիչ, իսկ այդպիսիների բնակչության թիվը այդքան էլ մեծ չէ: Մյուս դեպքերում կնոջ ընտանեկան կարգավիճակը կարող է լինել կնոջ հասարակական կյանքին խոչընդոտող նկատելի գործոն, ինչի մասին մեզ հայտնում էին հարցվողներից ոմանք.

---

[32] Հայաստանը զբաղեցնում է աշխարհում առաջին տեղերից մեկը ծնվող տղաների և աղջիկների թվի անհավասարության ցուցանիշով: 2010թ.-ին 100 աղջկա դիմաց ծնվել է 115 տղա, 2011թ.՝մոտ 114. Տես 5.2. Ժողովրդագրական իրավիճակ / Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական իրավիճակը 2011թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին, էջ 125 / Հայաստանի Ազգային Վիճակագրական ծառայություն / URL: [http://armstat.am/file/article/sv_12_11r_520.pdf] (հայ - http://armstat.am/file/article/sv_12_11a_520.pdf)

[33] «Խոպան»: Արտասահմանում (հիմնականում Ռուսաստանում) աշխատող սեզոնային աշխատավորների թիվը կազմում է 60-80 հազար մարդ տարեկան: Հիմնականում հայ միգրանտ աշխատողներ մեկնում են մարտ-մայիս, իսկ վերադառնում հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ միջինում արտերկրում անցկացնելով տարին 6-8 ամիս: Ավելի հազվադեպ է, որ նրանք 1 տարուց ավել կամ ընդմիշտ մնում են արտերկրում ՝ Հայաստանից իրենց մոտ տանելով ընտանիքը կամ արտերկրում ստեղծելով երկրորդը:

[34] Որոշ համայնքներում մշակված է արտերկրում սեզոնային աշխատանքների նախագիծը, ուր ներգրավված է համարյա ամբողջ չափահաս տղամարդկանց բնակչությունը: Այսպիսի համայքներ հանդիպում են ամբողջ Հայաստանի տարածքում՝ բացառությամբ Արարատյան դաշտավայրի, բայց ամենաշատը դրանք հանդիպում են Լոռիում:
Տես Armenia Migration Exodus Creates Women-Only Villages. Oct. 8, 2011. URL: [http://www.huffingtonpost.com/2011/08/10/armenia-migration-exodus-_n_923832.html]
Damien McGuinness. Armenia migration: The villages of women left behind. Aug. 10, 2011 / BBC / URL: [http://www.bbc.co.uk/news/world-europe-14386472]

> *“...Մի տարի ես ուզում էի առաջադրել իմ թեկնածությունը գյուղապետի պաշտոնին, բայց հետո մտափոխվեցի, ընտանիքը թույլ չտվեց”*
>
> **Կին, փախստական, Սայաթ-Նովա համայնքի ավագանու խորհրդի անդամ, Արարատ**

Այլ դեպքերում ընտանիքները ոչ միայն չէին խոչընդոտում կնոջ կարիերային, այլ նպաստում էին դրան: Համայնքի ղեկավար կանանց մեծամասնությունը մեզ հայտնում էր, որ իրենց ընտանիքները դեմ չէին, որ իրենք ընտրվեն համայնքի ղեկավար, հաճախ ընտրվել օգնում էր ամուսինը կամ տղան: Որոշ դեպքերում ընտանիքը կամ նույնիսկ բոլոր բարեկամները, ներառյալ հեռավորներին, քարոզում էին կնոջ համար և նրան օգնում ընտրվել: Սակայն դա ավելի շուտ բացառություն է, քան կանոն՝ հիմնականում ցեղը համայնքի ղեկավարի թեկնածու է առաջադրում տղամարդուն:

Դրա հետ մեկտեղ մենք հանդիպեցինք շատ տղամարդկանց, որոնք չնայած դեմ չէին ղեկավարի պաշտոնին կնոջ ընտրմանը, բայց միաժամանակ դա անընդունելի էին համարում իրենց կնոջ համար: Որպես օրինակ կարելի է բերել հետևյալ հայտարարությունը.

> *“... [Ա]ռաջին կինը դպրոցում ուսուցչուհի էր, ու, ասենք, կարողա ես մի պահ ցանկանայի, որ ինքը, հնարավորություն ուներ, որ կարար աշխատեր որպես տնօրեն թեկուզ, բայց ես չէի ուզի: ...Մենք վստահում ենք մեր կանանց, եթե երեխաներին հետևող լինի, թող աշխատեն:”*
>
> **Տղամարդ, 45տ. Յաղդան համայնքի բնակիչ, Լոռի**

Գենդերային դերերի առկայության այլ հետևանք է կնոջ համեմատական փակվածությունը: Եթե տղամարդը, որպես կանոն, աշխույժ է տնից դուրս և մասնակցում է համայնքի կյանքին, ապա կանայք հիմնականում շփվում են ուրիշ կանանց հետ, երբ միմյանց հյուր են գնում: Այդ պատճառով միջին և մեծ համայնքներում կանայք ավելի քիչ են ծանոթ մեծամասնությանը:

Գենդերային կարծրատիպեր

Գենդերային կարծրատիպերի և գենդերային դերերով որոշվող կոշտ սահմանափակումների շարունակվող ազդեցությունը հաճախ համարվում է քաղաքականության մեջ կանանց անբավարար ներկայացուցչության գլխավոր պատճառը: Անցկացրած հարցազրույցների արդյունքում մենք հանդիպեցինք կանանց առաջնորդության հանդեպ տարբեր տեսակետեր. տաք աջակցությունից մինչ ամբողջական ընդդիմություն: Այն դեպքերում, երբ կանանց առաջնորդության հանդեպ չկար ընդդիմություն, հարցվողները ասում էին, որ համայնքի ղեկավարի սեռը նշանակություն

չունի, նշանակություն ունի նրա կատարած աշխատանքի որակը: Կանանց առաջնորդության կողմնակիցները նշում էին տարբեր երկրների կամ Հայաստանի պատմության տարբեր շրջանների կին ղեկավարներին: Հաճախ հղում էր կատարվում գենդերային դերերին (այսպիսի հարցվողները ասում էին, որ կինը պետք է ավելի շատ զբաղվի ընտանիքով, քան քաղաքականությամբ՝ հաճախ ի նկատի ունենալով իրենց ընտանիքի կանանց) կամ համայնքի ղեկավարի կերպարին. կանանց ենթադրելի անկարողությունը կատարել իրենց պարտականությունները, խնդիրներին արագ արձագանքելու ունակության բացակայությունը և մարզպետի մոտ խորհրդատվություններին այլ համայքների ղեկավարների հետ շփման մեջ անհարմարությունը:

Տեղեկության համար ներկայացնենք գենդերային թեմայով CRRC-ի հարցման արդյունքները.

Աղյուսակ 6. Ինչքանո՞վ Դուք ձեզ հանգիստ կզգաք, եթե Ձեր անմիջական ղեկավարը կին լինի (%, 2010)[a]

	Հանգիստ		Անհանգիստ	
	Բացարձակապես	Մասնակի	Մասնակի	Բացարձակապես
Հայաստան[35]	54	22	9	11
Ադրբեջան[36]	39	19	15	11
Վրաստան[37]	28	32	13	9

[a] Յուրաքանչյուր երկրի համար ընդհանուր թիվը կարող է չկազմել 100%՝ պատասխանից ձեռնպահ մնացածների թվի պատճառով:

Ինչպես տեսնում ենք Հարավային Կովկասում ամենահանդուրժողական վերաբերմունքը կանանց առաջնորդության վերաբերյալ գրանցված է հենց Հայաստանում: Դրա հետ մեկտեղ համաձայն CRRC-ի, կանանց առաջնորդության “կողմնակիցների” թիվը ամենաբարձրն է Երևանում՝ 78%, միաժամանակ այստեղ է նաև հակառակորդների ամենամեծ թիվը՝ 21%: Գենդերային կտրվածքով կանանց թիվը նրանց շարքերում, ովքեր դրական են վերաբերվում կանանց ղեկավարության տակ աշխատելուն, ավելի մեծ է, քան տղամարդկանցը՝ 83% կանանց և 69% տղամարդկանց մոտ: Հակառակորդները ավելի շատ են. տղամարդկանց մոտ՝ 28% ընդդեմ տղամարդկանց և 11%՝ կանանց մոտ:

Հարկ է նշել, որ համաձայն հարցման, այլ գործոններ որոշիչ ազդեցություն չեն ունենում իրավիճակի վրա: Համացանցից օգտվողների մոտ կանանց ղեկավարության տակ

[35] COMFWBS: How would you feel with a woman as your immediate boss? / Caucasus Barometer 2010, Armenia/ URL: [http://www.crrc.ge/oda/?dataset=5&row=157]
[36] COMFWBS: How would you feel with a woman as your immediate boss? / Caucasus Barometer 2010, Azerbaijan / URL: [http://www.crrc.ge/oda/?dataset=6&row=149]
[37] COMFWBS: How would you feel with a woman as your immediate boss? / Caucasus Barometer 2010, Georgia / URL: [http://www.crrc.ge/oda/?dataset=4&row=158]

աշխատելու պատրաստակամությունը գրեթե նույնն է, ինչպես և նրանց մոտ, ովքեր չեն օգտվում ցանցից: Բավականին փոքր է նաև տարբերությունը տարիքային խմբերում և ակնհայտ է դառնում միայն կրթության մակարդակի տարբերությունից (միջին և դրանից ցածր մակարդակի կրթություն ունեցողների խմբում կանանց ղեկավարության տակ աշխատելու պատրաստակամությունը կազմում է 71%, իսկ բարձրագույն և միջինից բարձր կրթություն ունեցողների մոտ՝ 79%[38]):

Բերենք մի քանի մեջբերում:

> *"...Տղամարդիկ այսօր ավելի լավ են լուծում գյուղի խնդիրները. ես կին չէի ընտրի, թող նրանք ավելի լավ է զբաղվեն տնային գործերով:"*
>
> **Տղամարդ, 45 տարեկան. Քարաձոր համայնքի բնակիչ, Լոռի:**

> *"...Կին և տղամարդ տարբերություն չկա, մենակ հասկացող մարդիկ լինեն, որոնք որ իրենց գրպանների մասին չմտածեն, մտածեն էս խեղճ ժողովրդի մասին:*
>
> *...Գիտեք, եթե տղամարդիկ չկանգնեն կնոջ կողքին, իհարկե, շատ դժվար է, որովհետև էնտեղ արոտավայր տեղը ու անասնապահության:"*
>
> **Տղամարդ, 50 տարեկան, կաթոլիկ. Մեծավան համայնքի ավագանու խորհրդի անդամ, Լոռի:**

> *"...Գյուղի կին ղեկավարների մոտ խնդիրներ չկան, ընդհակառակը, իրենց միշտ ընդառաջ են գնում, կինը ավելի շատ է գյուղի մասին մտածում, քան տղամարդը:"*
>
> **Կին, 35 տարեկան. Մեղվահովիտ համայնքի բնակիչ, Լոռի.**

> *"... [Սեռը] նշանակություն չունի, կարևորը լավ աշխատող լինի, ինձ միայն դա է հետաքրքրում: Կանայք ավելի բռնկվող են, ամեն հասարակ բանի համար կարող են բռնկվել, վիրավորել, իսկ տղամարդիկ ավելի հանգիստ են:*
>
> *Մեր գյուղում բոլորը առաջադեմ են, շատերը գնում են սովորելու..."*
>
> **Կին. Աշոտավան համայնքի բնակիչ, Սյունիք:**

[38]URL: [http://www.crrc.ge/oda/?dataset=5&row=157&column=212]

> *"... Ընդհանրապես կնոջ գործ չի, բայց դե որ լավ աշխատող չլինի, կինն էլ կարա ղեկավարի:"*
> **Տղամարդ. Լոռի Բերդ համայնքի բնակիչ, Լոռի:**

> *"...Ինչ է Մ.Տետչերը և Ի.Գանդին ղեկավարներ չէ՞ին: Կանայք կան՝ տղամարդկանցից հարյուր գլուխ լավ են ղեկավարում: Ես կին կընտրեմ, տղամարդիկ կարող են խմել,այստեղ և այնտեղ թրև գալ, իսկ կինը նստում է ու աշխատում:"*
> **Տղամարդ, 35 տ. Վերին Դվին համայնքի բնակիչ, Արարատ.**

Սակայն, եթե նույնիսկ մեր կողմից ներկայացված վիճակագրական տվյալները ցույց են տալիս Հայաստանում կանանց առաջնորդության վերաբերյալ հարաբերական հանդուրժողականություն, ցանկացած դեպքում տղամարդը ունի ձայների 25%-ի առավելություն, որը կարող է խիստ փոփոխվել ըստ համայնքների: Բացի դրանից, պատասխանողներից շատերը կարող էին մինչև վերջ ազնիվ չլինել մեր կամ CRRC-ի հետ: Անուղղակիորեն դա ապացուցվում է նրանով, որ կանանց առաջնորդությունը պատասխանողների մոտ նույնացվում էր առաջընթացի հետ, իսկ կնոջ ենթարկվող կարգավիճակը՝ հետամնացության, այս պատճառով որոշ պատասխանողներ ժխտում էին այսպիսի հարաբերությունների առկայության փաստը իրենց համայնքում՝ դա ինչ-որ չափով ընկալելով որպես մեղադրանք:

Գենդերային նախապաշտամունքները իջեցնում են կանանց ընտրվելու հնարավորությունը, սակայն դա չէ կանանց ցածր ներկայացուցչության գլխավոր պատճառը:

Իշխանության անփոփոխություն

Կանանց ընտրվելու հնարավորության վրա ազդող ևս մեկ գործոն է տեղական էլիտաների անբավարար շարժունությունը, իսկ որոշ դեպքերում ռոտացիայի լրիվ բացակայությունը և որպես հետևանք՝ իշխանության անփոփոխությունը: Դա մրցակցային դաշտը նեղացնում է բոլորի համար՝ հատկապես կանանց համար:

Լոռիում կա 113 համայնք, որոնցին 105 գյուղական և 8 քաղաքային: 113 համայնքներից միայն 30-ում վերջին տարիներին [39] անցկացված ընտրությունների

[39] Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի կայքում հասանելի են 2005 թ.-ից հետո անցկացրած ընտրությունները: «Վերընտրությունների» տակ պետք է ընկալել երկրորդ և երրորդ փուլի

արդյունքում տեղի ունեցավ նախորդ շրջանում ընտրված տեղական իշխանության փոփոխություն: 3 դեպքերում ընտրությունները անցկացվել են երկար ժամանակ անց, և բաց տվյալներից դժվար է պարզել՝ փոխվել է համայնքի ղեկավարը, թե ոչ (երկարատև դադարների դեպքում դա կարող է կարևոր նշանակություն չունենալ տվյալ հաշվառման համար): Մնացած 80-ում համայնքի ղեկավարը վերընտրվեց նոր ժամկետի, ընդ որում 45 դեպքերում այլընտրանքի բացակայության պայմաններում[40]: Դրա հետ մեկտեղ 30-ից 17 դեպքերում համայնքի նոր ղեկավարը նախորդին հաղթեց ընտրություններում, իսկ 13-ում համայնքի նախորդ ղեկավարը չէր մասնակցում ընտրություններին (դեպքերից մեկում ընտրությունների արդյունքում իշխանությունը իր կինը «ժառանգեց»)[41].

Համեմատության համար օրինակ բերենք իրավիճակը Արագածոտնում: Արագածոտնի 114 համայնքներից 88-ում վերընտրություններում հաղթեց համայնքի գործող ղեկավարը, իսկ 26 համայնքի ղեկավար չընտրվեց նոր ժամկետի: Դրա հետ մեկտեղ 26-ից 14 դեպքերում համայնքի նախորդ ղեկավարը պարտություն կրեց գործողից, իսկ 12-ում՝ ընդհանրապես չէր մասնակցել (երկու դեպքում «իշխանությունը ժառանգեց» ընտրություններին հաղթած տղան):

Քանի որ դեպքերի ավելի քան երկու երրորդում ընտրություններին վերահաստատվում են համայնքի գործող ղեկավարի լիազորությունները, միջինում՝ Լոռիում համայնքի ղեկավարը պաշտոնը զբաղեցնում է երեք ժամկետ, Արագածոտնում այս ցուցանիշը մոտենում է չորսի, սակայն այստեղ կան տատանումներ՝ մեկ ժամկետից մինչև հինգը (այսինքն Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման պահից, քանի որ մինչև 2008թ. ընտրությունները անցկացվում էին երեք տարին մեկ՝ սկսած 1996 թ.-ից).

Որոշ դեպքերում քաղաքական այսպիսի երկարակեցությունը կապված է համայնքի ղեկավարի նկատմամբ հարգանքի և վստահության բարձր մակարդակի հետ, այլ դեպքերում դա կարող է կապված լինել համայնքի ղեկավարի կառույցի հանդեպ անտարբերության անվստահության, երրորդ դեպքում՝ համայնքի բնակիչների պատերնալիստական կողմնորոշման հետ, “ուժեղ առաջնորդ” ունենալու կարիքի կամ համայնքի ղեկավարի ավտորիտար հակվածության հետ:

Հարկ է նշել, որ համայնքի ներկա ղեկավարի ընտրություններին չմասնակցելու դեպքում մյուս թեկնածուների համար բացվում է «հնարավորությունների պատուհան»: Բանն այն է, որ եթե համայնքի ղեկավարի վերընտրման դեպքում ընտրությունները հաճախ լինում են առանց այլընտրանքի, ապա նրա ընտրություններին չմասնակցելու դեպքում

ընտրությունները, որոնք անցկացվեցին գրեթե ամենուր 2008-ից 2011թթ. , սակայն որոշ բացառիկ դեպքերում 2006-2007թթ.:

[40] Մնացած 36 դեպքերից 22-ում համայնքի ղեկավարը ուներ երկու կին մրցակից, 12-ում՝ 3, 1-ում՝ 4 և 1-ում՝ 6 (ք. Վանաձոր, բնակչության քանակով Հայաստանում երրորդ քաղաքը)

[41] Հետազոտության ընթացքում ստեղծված ընտրությունների պահոցի համաձայն

թեկնածուների թիվը կտրուկ մեծանում է՝ չնայած որ համայնքի նախորդ ղեկավարը, որպես կանոն, պաշտոնի համար ունենում է իր թեկնածուին:

Օրինակ, Լոռիում համայնքի ղեկավարները ընտրությունների վերջին փուլի ժամանակ (2008-2011 թթ., ավելի հաճախ 2008թ. աշնան ընտրություններում) 53 դեպքում ունեին մրցակիցներ ընտրություններին: Դեպքերից 36-ում գործող ղեկավարը հաղթեց, մնացած 17-ում՝ պարտվեց: Եվ նույնիսկ հաշվի առնելով այն, որ մրցակիցները հաճախ կարող են լինել անհավասար հակառակորդներ՝ (այլ նախադրյալ, ծագում, տարիք և այլն) տարբերությունն ահռելի է:

Դրա հետ մեկտեղ համայնքները կարելի է կիսել երկու հիմնական խմբի՝ հաշվի առնելով մրցակցային պայքարի հիման վրա համայնքի ղեկավարի ընտրություններում ժողովրդավարական սկզբունքների առկայությունը: Ժողովրդավարական սկզբունքներով համայնքների առկայությունը միջինով երկրում կարելի է գնահատել 40%, սակայն մարզերում դրանց թիվը զգալիորեն տատանվում է: Այլ համայքներում իշխանությունը կարելի է համարել պատեռնալիստական: Դրանցից մեծամասնությունում բնակչությունը ինքն է ցուցաբերում պատեռնալիստական տրամադրություններ՝ իշխանության համար քվեարկելով այլընտրանք չունեցող ընտրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ համայնքի ղեկավարը ակնհայտորեն խախտում է համայնքի բնակչության իրավունքները և արժանապատվությունը: Այս դեպքում համայնքները (այլ դեպքերում համայնքի մեջ ուղեժ ցեղերը) առաջադրում են այլընտրանքային թեկնածուին և ընտրում նրան: Երբեմն առաջադրվում են այնպիսի թեկնածուներ, որոնք փորձում եմ բռնտիրել իշխանությանը և օգտագործելով ավտորիտար մեթոդները թույլ չտալ մրցակցություն կամ իշխանությունը խլելու ցանկացած փորձ՝ դիմելով ընտրությունների կեղծմանը, և հաճախ զգում են լեգիտիմության պակաս, չնայաց բոլոր համայնքներում չէ, որ դա նրանց հաջողվում է: Հարկ է նշել, որ համայնքի ղեկավարի ձեռքերում իշխանության համընդահնուր կենտրոնացման համար չկան միջոցներ:

Տեղական ինքնակառավարման մեջ կանանց ներգրավման վրա ազդող գործոններ

Մենք նկատեցինք, որ կանանց ակտիվության մակարդակը փոխվում է ոչ միայն կախված ներգրավված անձանցից, այլ նաև համայնքից: Հայտնաբերվեցին որոշ օրինաչափություններ, որոնք ազդում են տեղական խորհուրդներ կանանց ընտրվելու հնարավորության վրա:

Աշխարհագրությունը նշանակություն ունի՞

Ավելի վաղ նշվել էր, որ տեղական ինքնակառավարման մեջ կանանց ակտիվությունը հակառակ համեմատական է համայնքի հեռավորությանը մայրաքաղաքից (Երևանից) և ուղիղ համեմատական է սահմանին մոտ լինելուն: Այդ պատճառով մենք ենթադրություն արեցինք, որ համայնքում կանանց առաջնության հավանականությունը կախված է համայնքի տրանսպորտային և աշխարհագրական դիրքից:

Հետագայում այս ենթադրությունը գտավ և՛ հաստատումներ, և՛ ժխտումներ: Այսպես, իրականում, հեռավոր համայնքներում կին առաջնորդները ավելի շատ են: Դրա համար ներկայացնենք Հայաստանի քարտեզը, որտեղ նշված են բնակավայրեր, որտեղ տեղական ինքնակառավարման մեջ ներգրավված են կանայք:

Կարմիրով նշված են այն համայքները, որտեղ գործող ավագանու ղեկավարը կին է (2011թ.-ի դեկտեմբերի 10-ի դրությամբ), ավելի խոշորով նշված են այն համայնքները, որոնց բնակչությունը մեծ է 1000-ից: Կապույտով նշված են այն համայնքները, որտեղ կանայք առկա են ավագանու խորհրդում: Նշման չափը նույնպես կախված է բնակչությունից: Նարնջագույնով նշված են այն համայքները, որտեղ վերջին ընտրությունների ժամանակ իր թեկնածությունը կին է առաջադրել: Իսկ չներկված կարմիր օղակներով նշված են այն համայնքները, որտեղ վերջին ժամանակահատվածում եղել է կին ղեկավար:

Արարատյան մարզում կնոջ կողմից ղեկավարվող միակ համայնքը՝ Վերին Դվինը, թվում է, թե անմիջականորեն մոտ է Երևանին: Սակայն, իրականում դա վերջին նախալեռնային համայնքն է, իսկ այն մյուս գյուղերի հետ կապող ճանապարհը մինչև վերջին շրջանը ասֆալտապատված չէր: Արարատում և Կոտայքում կենտրանական

թվացող «կապույտ կետերը» խաբուսիկ են. բնակչության բարձր խտության պատճառով նրանք միմյանց մոտ են տեղակայված՝ այսպիսով կազմելով շրջանի գյուղերի մեկ չորրորդը, բացի դրանից նրանք իրենցից ներկայացնում են խոշոր գյուղեր, ի տարբերություն Սյունիքի փոքր գյուղերի, և կանանց մասնակցությունը տեղական խորհուրդներին հիմնականում անվանական է, քանի որ նրանք կազմում են փոքրամասնություն (հաճախ 1-ը 11-ից):



Գեղարքունիքը ցուցադրում է հստակ տարբերություն արևմուտքի և արևելքի միջև. սահմանակից հարավային մասում ավագանին գլխավորում են երկու կին, իսկ երկու գյուղերում կանայք ղեկավարել են վերջին ժամանակներս, իսկ չորսում առաջադրել էին իրենց թեկնածությունները համայնքի ղեկավարի պաշտոնին, բայց ապարդյուն: Ավելի բնակեցված և տրանսպորտի տեսակետից ավելի լավ վիճակում գտնվող արևմտյան

հատվածում ոչ միայն չկա ոչ մի կնոջ կողմից ղեկավարվող համայք, այլ նաև այդպիսիք չկային վերջին տարիներին, և ոչ մի համայնքում կինը չի առաջադրել իր թեկնածությունը համայնքի ղեկավարի պաշտոնին:

Լոռիում կանանց կողմից ղեկավարվող վեց համայնքներից չորսը գտնվում են դժվարանցանելի լեռնային շրջաններում: Այնտեղ ճանապարհների վրա բացակայում է ասֆալտի շերտը, իսկ միջքաղաքային տրանսպորտը գյուղից իրականացնում է անկանոն երթեր՝ միջինում շաբաթը մեկ անգամ: Եվս մեկ գյուղական համայնք՝ Յաղդանը, նույնպես գտնվում է տրանսպորտային շատ վատ վիճակում, քանի որ իրեն մոտ տանող ճանապարհը վատթարանում է գյուղին մոտենալուն համընթաց, և հետագայում ասֆալտային ծածկույթը անհետանում է:

Կանանց կողմից ղեկավարվող Շիրակում՝ երկու և Տավուշում՝ երկու համայնքներից մեկը անմիջականորեն մոտ են սահմանին: Նույնը վերաբերում է նաև Սյունիքին և Վայոց Ձորին:

Իհարկե դա չի կարող լինել հասարակ զուգադիպություն, ավելին, դա ավելի շուտ օրինաչափություն է: Սակայն այդ համգամանքը, բնականաբար, չի կարող լինել ստեղծված իրավիճակի միակ բացատրությունը: Ինչպե՞ս է ստացվել, որ հենց այդպիսի համայնքներում են ղեկավարող պաշտոններ զբաղեցնում կանայք [42] : Չէ՞ որ աշխարհագրական դիրքը ինքնուրույն չի կարող լինել կանանց ակտիվության միակ պայմանը, բացի դրանից, կան կանանց ակտիվությամբ համայքներ, որտեղ տրանսպորտային վիճակը համեմատաբար լավն է:

Հետազոտությունների արդյունքում մենք առանձնացրեցինք նաև այլ հանգամանքներ, որոնք ազդում են տեղական մակարդակում կանանց ակտիվության վրա:

Տնտեսվարության տեսակ

Ինչպես հայտնի է, կնոջ դիրքը ավանդական հողագործական և անասնապահական հասարակություններում զգալիորեն տարբերվում է: Այն նաև տարբեր կերպ դրսևորվում է լեռ-հովիտ երկճյուղավորվածության մեջ, ուր լեռնային և անասնապահական համայնքները բնութագրվում են կանանց ավելի մեծ ազատությամբ և հասարակական ու տնտեսական կյանքին ավելի բարձր ներգրավվածությամբ, իսկ հովտայիններում՝ ավելի փոքր[43]:

---

[42] Հարկ է նշել, որ որոշ համայնքներում կանայք ոչ միայն խորհուրդների ղեկավարներն են, այլ կազմում են ամբողջ համայնքի վարչակազմը, իսկ որոշ դեպքերում՝ ավագանու ամբողջ խորհուրդը:

[43] Լեվոն Մելիք-Շահնազարյանը իր «Հայ ազգի բնույթը» ակնարկում այսպես է բնութագրում լեռների և հովիտների բնակիչների միջև տարբերությունը. «Լեռնաբնակների մոտ կնոջ ազդեցությունը ընտանիքում սովորաբար զգալիորեն գերազանցում է հովիտների բնակիչների մոտ կնոջ ազդեցությանն

Հետազոտված գյուղերի դեպքում նույնպես նկատելի է անասնապահական և խառը (անասնապահական և հողագործական) բարձրալեռ համայնքների քանակական գերակայություն: Այս տիպին վերաբերում են համարյա բոլոր գյուղերը՝ բացառությամբ Լոռիի Բազում գյուղը և Արարատյան դաշտավայրի գյուղերը:

Մեզ հետ զրուցելիս այս գյուղերի բնակիչները հաճախ հայտնում էին այն տեսակետը, որ ղեկավարի սեռը զգալի նշանակություն չունի: Հակառակը, Արարատյան դաշտավայրի խոշոր հողագործ համայնքներում կանանց մասնակցությունը նվազագույն էր: Եթե փոքր լեռնային համայնքում «կանանց ակտիվը» կազմում էր 10-15 կին մեկ գյուղում, ապա 2000-ից ավել բնակչությամբ հովտային գյուղերում հասարակայնորեն ակտիվ կանայք կարող էին ընդհանրապես չլինել: Դրա հետ մեկտեղ այսպիսի գյուղերի բնակչությունը հաճախ անմիջականորեն հայտնում էր իր տեսակետը այն մասին, որ կառավարումը դա կանանց գործը չէ: Հայաստանում հողագործական գյուղերը, ինչպես տեսականորեն, այնպես էլ գործնականորեն, իրենց բնույթով ավելի տոտալիտար են և հաճախակի ունեն ավտորիտար տիպի այլընտրանքի իրավունք չտրամադրող առաջնորդ, մինչդեռ լեռնային համայնքներում ընտրությունները ավելի հաճախ լեգիտիմ են և անցկացվում են մրցակցային սկզբունքի հիման վրա:

Հարկ է նշել, որ Արարատյան դաշտավայրի խոշոր գյուղերի մեծ մասը գաղթականական են և վերաբերում են XIX դարի առաջին կեսին: Նրանք ձևավորվել են Խոյի, Սալմաստի, Իրանի այլ շրջանների, ինչպես նաև Օսմանյան կայսրության եկվորների շնորհիվ: Նրանց մի մասը վերադարձավ իրենց հին բնակավայրերը, որտեղից նրանց արտաքսել էր շահ Աբբասը՝ XVII-րդ դարում: Արարատից բացի, այսպիսի համայնքները մեծամասնություն են կազմում Գեղարքունիքի հարավում, Կոտայքում, Արմավիրում և Վայոց Ձորում:

Այսպիսի գյուղերում բավականին բնական է իրավիճակը, երբ համայնքի ղեկավարը ընտրվել է 1990-ական թվականներին և այդ ժամանակվանից չի փոխվել, ընդ որում, հախաճ ընտրությունները անցնում են առանց այլընտրանքի: Համայնքների ներկա ղեկավարները պատկանում են բարգավաճ գյուղական ցեղին, որին սովետական ժամանակներին պատկանում էին կոլտնտեսության ղեկավարները և գյուղական ավագները: Հնարավոր է, որ այսպիսի ժառանգականությունը սկիզբ է առել դեռ նախասովետական ժամանակներից՝ չնայած հաստատել կամ ժխտել այս պնդումը մեզ չհաջողվեց:

Այդ ժամանակահատվածում ստեղծված գյուղերում կանանց ներկայացուցչությունը տեղական իշխանությունում ամենափոքրն է: Հնարավոր է՝ դա կապված է մեծամասամբ Կոտայքում և Արարատյան դաշտավայրում տարաբնակեցման, հնարավոր է նաև՝ նախկին վայրերից իրենց հետ բերած քաղաքական մշակույթի հետ:

ու նշանակությանը: Ավելին, Հայաստանի լեռներում կանայք և, հատկապես, մայրերը հաճախ ընտանիքի իրական տիրուհիներն են»:

Հայաստանի տնտեսության հետսոցիալիստական ձևափոխությունը ստեղծեց գյուղեր, որոնք չեն պատկանում նշված տեսակներից ոչ մեկին: Դա կիսաքաղաքային համայքներն էին, որոնք խիստ տուժել էին քաղաքներում գործարանների փակումից: Դրանցից են, օրինակ, Բազումը Լոռիում և Քարահունջը Սյունիքում: Այս երկու համայնքները բավականին խոշոր են. դրանց բնակչությունը մոտ 1200 մարդ է: Սովետական ժամանակներում դրանց բնակչության մեծ մասը աշխատում էր հարևան քաղաքներում (Վանաձորը՝ Բազումի և Գորիսը՝ Քարահունջի համար): Դրանց բնակիչները վատ են տեղեկացված ավանդական գյուղական տնտեսության՝ թե՛ հողագործության, թե՛ անասնապահության հետ, իսկ այս գյուղերի դաշտերը տարածքով մեծ չեն: Բնական է, որ տնամերձ տարածքները բավարար չեն գոյատևման համար: Այս պատճառով նման համայքներում շատ կարևոր է արտագնաց աշխատանքը՝ սեզոնային աշխատանքները՝ մեծամասամբ Ռուսաստանում:

Պարզ է, որ արտագաղթի խնդիրը շոշափում է Հայաստանի բոլոր համայնքները, սակայն, եթե փոքր լեռնային համայնքներից գաղթողները փորձում են իրենց հետ տանել ամբողջ բարեկամությունը, ապա համեմատաբար հարուստ համայնքներից արտագաղթը աննշան է և ուղղված է հիմնականում դեպի Երևան: Արտագաղթը ավելի մեծ չափով շոշափում է նախկին արտադրական համայնքները՝ խեղաթյուրելով նաև հասարակության սեռական համակարգը, քանի որ սեզոնային աշխատանքներին մեկնում են երիտասարդ և հասուն տղամարդիկ: Այսպիսի համայնքներում կնոջ ընտրվելու հավանականությունը նույնպես ավելի մեծ է, քան հովտայիններում:

Բնական է, որ տնտեսվարության տեսակից ասպիսի կախվածությունը միակ գործոնը չէ, իսկ այն փաստը, որ համայնքը հողագործական է, չի բացառում կնոջ մասնակցությունը հասարակական կյանքին, սակայն պետք է հաշվի առնել, որ տնտեսվարության ձևին ավելանում են նաև կանանց ակտիվության հնարավորության վրա ազդող այլ գործոններ:

Գյուղերի ազգագրական հատկանիշները և նրանց ազդեցությունը քաղաքական մշակույթի վրա

Տնտեսավարության տեսակի հետ մեկտեղ որոշակի ազդեցություն են ունենում նաև գյուղերի ազգագրական հատկանիշները: Ներկա բնակիչների ծագումից ելնելով՝ այդ գյուղերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

- «Հնաբնակների» գյուղեր

Հայաստանի բոլոր գյուղերի մոտ 5-10% ներկայացնում են «հնաբնակներով» բնակեցված գյուղեր, որոնք տարածաշրջանում են բնակվել անդադար, նույնիսկ մինչև Ռուսաստանի կայսրության Կովկաս գալը: Այս գյուղերը չէր շոշափել արտաքսությունը, և դրանք համապատասխանաբար վերաբերում են հիմնականում Սյունիքի մարզին, որոշ

դեպքերում՝ Լոռիին և Շիրակին: Այս տարածքները պահպանել են ինքնավարությունը և ուշ միջին դարերում, ի տարբերություն Օսմանյան և Պարսկաստանի կայսրությունների հայաբնակ շրջանների:

Հնաբնակ համայնքներում կանանց ներկայացուցչությունը ավելի բարձր է, քան միջինով՝ երկրում: Այսպես, օրինակ, Սյունիքում Քարահունջ և Թորունիկ, Տավուշում Վոսկեպար և Աշոտավան գյուղերը, որոնց գյուղապետը մինչև վերջերս կին էին, մեծամասամբ կամ բացարձակապես բնակեցված են հնաբնակներով:

- <u>XX դարում ստեղծված գյուղեր</u>

Եվս մեկ խումբ կազմում են ավելի ուշ շրջանի գյուղական համայնքներ, որոնք ստեղծվել են XX դարում՝ սովետական իշխանության կողմից: Դրանց մի մասը ստեղծվել են 20-30-ական թվականներին, իրենց մեջ ներառելով տարբեր շրջանների փախստականներին և գաղթականներին, իսկ մյուս մասը՝ նախկինում ճահճաչած և այլ հողերի յուրացման ընթացքում՝ 40-50-ական թթ.-ին: Այսպիսի համայնքներ ավելի շատ են Արմավիրում՝ չնայած որ դրանք կան երկրի նաև այլ շրջաններում:

Այսպիսի գյուղերում կանանց ներկայացուցչությունը համեմատաբար բարձր է. հնարավոր է նրանց ավելի ուշ կրթվածության պատճառով այսպիսի համայքներում հասարակական կառուցվածքը մնում է ավելի շարժուն և ավելի մեծ հնարավորություններ է պահպանում տեղական քաղաքականության մեջ կանանց ներգրավվման համար: Այսպիսի գյուղեր կան նաև համեմատաբար մեծ հողագործ համայնքներում. այսպես, 1946 ու 1949թթ.-ին Կոտայքում հիմնված Նոր Երզնկա և Արմավիրում՝ Արեշավան գյուղերի բնակչությունը կազմում է 1500 մարդ:

- <u>Էթնիկ փոքրամասնություններով բնակեցված գյուղեր</u>

Երկրում էթնիկ փոքրամասնության չափաբաժինը փոքր է և կազմում է բնակչության 2.1%-ը: Գյուղական բնակչության համար այս ցուցանիշը քիչ ավելի բարձր է և մոտենում է 3%-ի: Հայաստանում հիմնական գյուղական էթնիկ փոքրամասնություն են կազմում ռուսները, պոնթիական հույները, ասորիները և եզդիները: Հայաստանի անկախացումից հետո հույների մեծամասնությունը վերադարձավ Հունաստան: Ասորիները մասամբ արտագաղթեցին Ռուսաստան, նույն կերպ վարվեցին նաև ռուսները: Եզդիների գյուղերը մեծամասամբ պահպանվեցին. արտագաղթը նրանց շոշափեց նույնքան, ինչքան որ հայերին: Այսօր կան խառը բնակչությամբ բազմաթիվ գյուղեր: Դրանք այն գյուղերն են, որոնք տարբեր չափով լքել են էթնիկ փոքրամասնությունները և որտեղ կան վերաբնակ հայեր: Մեր հետազոտության տեսանկյունից խառը բնակչությամբ գյուղերը նույնպես պատկանում են էթնիկ փոքրամասնություններով բնակեցված գյուղերին:

Էթնիկ փոքրամասնությամբ և խառը բնակչությամբ գյուղերում կանանց ներկայացուցչությունը ավելի բարձր է, քան միջինով՝ հանրապետությունում: Յաղդան

գյուղը նախկինում հունական էր, այժմ այն խառն է, Վերին Դվինը ասորական գյուղ է, որը մեծամասամբ պահպանել է ասորական բնակչությունը: Դժվար է ասել, թե արդյոք դա կախված է էթնիկ փոքրամասնության կարգավիճակի հետ, քանզի դրա համար պետք են հավելյալ նյութեր և դա կարող է զուգադիպություն լինել:

- Ադրբեջանի փախստականներով բնակեցված գյուղեր

Վերջին և բավականին մեծ խումբ կազմում են գյուղեր, որոնք բնակեցված են փախստականներով Ադրբեջանից: Այս համայնքները մեծամասամբ առաջացան նախկին ադրբեջանական համայնքների տեղը՝ բնակչության փոխանակման և փախստականների շնորհիվ: Այս գյուղերի մեծ մասը տեղակայված է Շիրակում, Գեղարքունիքում, Սյունիքում և Լոռիում՝ չնայած կան բոլոր մարզերում:

Համարյա բոլոր այդ գյուղերը զգացել են անվերջ արտագաղթ 90-ական և 2000թթ.-ին և նրանք չունեն պաշտոնական տեղական էլիտաներ: Հնարավոր է, որ դա է պատճառը, որ 1988-1991թթ.-ին ստեղծված և փախստականներով բնակեցված գյուղերում է դիտվում տեղական ինքնակառավարման մեջ կանանց մասնակցության ամենաբարձր աստիճանը: Օրինակ, Տավուշի և Գեղարքունիքի սահմանին գտնվող Աղավնավանք գյուղը հիմնվել է 1988թ.-ին և բնակեցված է փախստականներով: Վայոց Ձորի միակ գյուղը, որտեղ ղեկավարը կին է, նույնպես բնակեցված է փախստականներով:

Կա արդյո՞ք հավատքի ազդեցություն

Հավատքի ազդեցությունը կնոջ ընտրման հնարավորության վրա վիճելի է թվում: 90-ից ավելի անհատական և խմբային հարցազրույցներից ոչ մեկում մեր զրուցակիցները չանդրադարձան հավատքին՝ որպես գործոնի, որը ազդում է համայնքի ղեկավարի սեռի վրա: Մի կողմից հովիտների բնակիչները ցուցադրում են ավելի մեծ կրոնականություն, քան լեռնաբնակները, սակայն ազդում է դա արդյոք հասարակական կյանքում կանանց մասնակցության վրա՝ անհայտ է:

Եկեղեցու կարծիքը այս հարցի վերաբերյալ նույնպես միանշանակ չէ: ՀԱԵ-ի Արարատյան թեմի երեց Շմավոն Ղևոնդյանի կարծիքով. “կնոջը հաճո չէ զբաղվել քաղաքականությամբ, եթե նրան նախանշված է օջախի պահապանի դերը: Քրիստոնեությունը տղամարդուն և կնոջը դիտարկում է որպես հավասար, բայց Աստված բաշխել է իրենց դերերը”[44]: Քիչ ավելի շուտ Կիլիկիո Կաթողիկոս Արամ Առաջինը իր Էնցիկլիկայում 2010թ. հայտարարեց կնոջ տարի՝ կոչ անելով վերագնահատել կնոջ դերը

[44] Иерей: Чем меньше женщин будет в армянской политике, тем лучше для самой политики. News.am 12 декабря 2011 г. URL: [http://news.am/rus/news/85459.html]

հասարակությունում. “կինը և տղամարդը հավասար են Աստծո աչքերում և աշխարհի ու մարդկանց մասին հոգալու գործում հավասարազոր գործընկերներ են”[45]:

Ներկայացնենք ամբողջ ցանկը կանանց կողմից այսօր և նախկինում ղեկավարվող գյուղերի:

Աղյուսակ 7. Կանանց կողմից ղեկավարվող գյուղերը

Համայնք (մարզ)	Համայնքի ղեկ. կին.[a]	Խորհ.		Բնակչություն				Աշխարհագրություն					Հիմ թիվ.[l]	Էթնոգրաֆ. կազմ
		տ	կ	պ[b]	տ[c]	% կ[d]	մ[e]	B[f]	տ[h]	p1[i]	p2[j]	P3[k]		
Արեգնադեմ (Շիրակ)	Հազրյան Աղունիկ	5	0	425	379	53.6	13	1850	2.3	11	24	141	1988	փախստական., վերաբնակ.
Ախուրիկ (Շիրակ)	Գասպարյան Վարդիթեր	5	0	1241	962	58.8	28	1480	9.2	2	5	131	1850	փախստական., արևմտ. Հայ.
Քարահունջ (Սյունիք)	Ավետյան Լուսինե	5	2	1305	1182	49.3	7.4	1250	20	36	61	258	հնա	հնաբնակներ (կարմիր)
Հացավան (Սյունիք)	Մարգարյան Շուշան	4	0	245	224	50.9	15	1730	8.0	12	126	228	1922	վերաբնակ.
Շրվենանց (Սյունիք)	Մանուկյան Արմինե	2	2	75	72	54.2	n/a	1140	5.8	34	20	340	1828	վերաբնակ., Ղար., Իրան
Տորունիք (Սյունիք)	Հակոբյան Անահիտ	3	2	124	157	51.0	13	1810	19	13	121	234	հնա	հնաբնակներ
Աղավնավանք (Տավուշ)	Ներսիսյան Վարդուշ	3	2	298	379	54.6	11	1120	14	24	36	125	1988	փախստական.
Ոսկեպար (Տավուշ)	Աղբալյան Հրուշ	5	0	863	883	51.4	10	810	12	2	34	174	հնա	հնաբնակներ
Նոր Երզնկա (Կոտայք)	Հարությունյան Ալինա	5	2	1758	1470	51.0	12	1320	16	32	55	32	1949	վերաբնակ.
Արևաշատ (Արմավիր)	Գևորգյան Սուսաննա	5	2	2194	1413	50.5	8.7	850	3.8	7	36	8	1946	վերաբնակ.
Արևիկ (Արմավիր)	Պետրոսյան Կարինե	4	0	2872	2473	50.0	3.1	850	12	12	8	56	n/a	n/a
Արտամետ (Արմավիր)	Դավթյան Անահիտ	5	0	164	133	52.6	41	970	6.4	9.0	16	65	1982	վերաբնակ.
Ծափաթաղ (Գեղարքունիք)	Բոյաղչյան Թագուհի	4	1	414	274	51.8	0.8	1960	21	6	100	210	1988	փախստական.
Շատջրեք (Գեղարքունիք)	Գևորգյան Զոյա	3	1	468	517	49.3	9.0	2020	6.9	16	82	177	1831 1991	n/a
Վերին Դվին (Արարատ)	Պետրովա Լյուդմիլա	5	0	2222	1866	54.1	16	960	61	11	13	16	1805, 1992	ասորիներ փախստական.
Գոմք (Վայոց Ձոր)	Ակոպովա Ստելլա	3	1	263	260	54.2	-11	1880	38	7	35	154	1989	փախստական.
Բազում (Լոռի)	Հարությունյան Սրբուհի	4	1	965	1122	52.7	18	1550	35	36	110	138	1830	n/a
Ապավեն (Լոռի)	Սուղյան Նարինե	2	2	140	127	53.5	1.7	1700	3.1	1	68	196	1991	փախստական. վերաբնակ.
Ձյունաշող (Լոռի)	Մամիկոնյան Յանա	3	1	153	258	56.6	10	1600	17	2	67	195	1989	փախստական.

[45] Арам I объявляет 2010-й годом женщин. News.am. 12 января 2011 г. URL: [http://news.am/rus/news/12018.html]

Մեղվահովիտ (Լոռի)	Շահբազյան Համեստ	2	3	275	167	49.1	n/a	1670	14	10	63	191	1989	փախստական. վերաբնակ.
Պաղաղբյուր (Լոռի)	Դումիկյան Առուսյան	1	4	153	131	50.4	3.0	1740	13	1	72	200	1989	փախստական. վերաբնակ.
Յաղդան (Լոռի)	Կերխանաջյան Վալենտին	4	1	97	276	55.4	26	1360	12	20	36	151	1821 1998	հույներ վերաբնակ.
Աշոտավան (Սյունիք)	Օհանյան Արևհատ	4	0	653	561	50.4	11	1690	17	14	112	225	стар 1828	հնաբնակ.
Նոր Կեսարիա (Արմավիր)	Սերոբյան Հրանուշ	6	1	1600	1288	48.2	3.2	910	14	4	16	64	1949	վերաբնակ.
Գեղամասար (Գեղարքունիք)	Եղիազարյան Էմմա	7	0	1198	1068	52.3	1.4	2060	26	5	90	185	1988	փախստական.
Ազատ (Գեղարքունիք)	Մելիքյան Կարինե	2	3	152	165	54.5	n/a	2050	8.3	13	88	183	1988	փախստական.

[a] Այն գյուղերի համար, որտեղ տղամարդիկ փոխարինել են կանանց, նշված է վերջինի ազգանունը

[b] Հիմնական բնակչությունը՝ պաշտոնական տվյալների համաձայն, 2011թ.

[c] Առկա բնակչությունը՝ 2001թ.-ի մարդահամարի համաձայն

[d] Բնակչության մեջ կանանց չափաբաժինը՝ 2011թ.-ի մարդահամարի համաձայն

[e] Տղամարդկանց միգրացիայի ինդեքսը (հիմնական և առկա բնակչության տարբերությունը)

[f] Բարձրությունը ծովի մակարդակից

[h] Համայնքի չափը, հեկտար

[i] Հեռավորությունը փաստացի սահմանից

[j] Հեռավորությունը շրջանային կենտրոնից

[k] Հեռավորությունը Երևանից

[l] Ի նկատի ունենք գյուղի վերջին անդադար բնակեցումը

Էլիտաների իներցիա

Ավելի հին գյուղերում (որոնք ստեղծվել են XXդ.-ից առաջ) արդեն ձևավորվել էին սեփական հասարակական և տնտեսական էլիտաներ, որոնք փոխում էին իրենց ձևը կախված ժամանակաշրջանից՝ սովետական ժամանակներում դրանք դպրոցների տնօրենները, սովտնտեսությունների և կոլտնտեսությունների ղեկավարները, գյուղական ավագներն և այլոք էին: Նրանց ընտանիքները մինչև հիմա կշիռ ունեն հասարակության մեջ՝ պահպանելով նաև իրենց տնտեսական դրությունը: Հաճախակի համայնքի ղեկավար է դառնում 1980-ականների գյուղական ավագի տղան կամ եղբորորդին:

Գյուղերը հաճախ ձևավորված են բարեկամների խմբից, կամ բաղկացած են մի քանի ցեղից: Այս գործոնը հաճախակի կարևորվում է քվեարկության ժամանակ. հարցվողներից ոմանք ասում էին. «ինչքան շատ բարեկամներ ունեն, այդքան մեծ է նրանց ընտրման հնարավորությունը»: Այսպիսով տեղական մակարդակում հաճախ գերիշխում է ընտրության վաղեմի սկզբունքը: Քանի որ լայն բարեկամական կապերը հիմնվում են

նահապետական ավանդույթների վրա, այս համակարգում գերիշխում են հենց տղամարդիկ: Իհարկե, որոշ դեպքերում կանայք նույնպես հենվում են իրենց առաջադրած ցեղերի վրա, բայց դա մեծամասամբ արական ավանդույթ է:

Հենց տեղական էլիտայի ինիերցիայի բացակայությամբ կամ թուլությամբ է պայմանավորված կանանց զգալիորեն ավելի մեծ ներկայացուցչությունը նոր համայնքներում, փախստականների, 1940-ական թթ.-ի վերաբնակիչների, ինչպես նաև բնակչության (առաջին հերթին տղամարդկանց) զանգվածային արտագաղթ ունեցած համայնքներում:

Սակայն «տեղական էլիտաների ինիերցիան» լավ բացատրում է իրավիճակը Արարատյան մարզում և 19-րդ դարի վերաբնակիչներից բաղկացած համայնքների իրավիճակը, բայց չի բացատրում կանանց բարձր ներկայացուցչությունը արմատական, հնաբնակ համայնքներում: Այսպիսով, այստեղ առկա է գործոնների մի բույլ, և այն, որ այս համայնքները լեռնային են և անասնապահական, և այն, որ այստեղ գործում է այլ քաղաքական մշակույթ, որը, հնարավոր է, կապված է անցյալի ինքնավարության հետ:

Կա՞ն արդյոք վարչական խոչընդոտներ

Շրջանային կամ պետական մակարդակներում, ինչպես մեզ պատմում էին հարցազրույցների մասնակիցները, կանանց առջև խոչնդոտներ, որպես կանոն, չեն առաջացնում: Լինում է նաև հակառակը՝ փորձում են բարոյապես աջակցել, բերել որպես օրինակ և սատարել համայնքային ծրագրերը, բայց հաճախակի ոչ մի կերպ չեն խառնվում և չեն մասնակցում:

> *“... Չէ, ես չեի ասի, որ եթե ես կին եմ, ինչ-որ եթե հարց ունեմ դիմելու մարզպետարան, նման պրոբլեմներ ոչ մի անգամ էլ չի եղել, չէ: Ընդառաջում են, հլը ավելի շատ, որպես կին, աշխատում են ավելի օգնած լինել, ոչ թե ասենք թե հետ տալ:”*
>
> **Յաղդան համայնքի ղեկավար, Վալենտինա Կերխանաջևա**

Չնայած այս մի կողմից զուսպ բարյացակամ վերաբերմունքին՝ երբեմն կանայք համայնքային վարչական խորհուրդներում (մարզպետարաններում) իրենց հաճախ զգում են փոքրամասնություն: Հարցազրույցի մասնակիցները վկայում էին, որ հաճախ համայնքներում նպաստների հարցը լուծվում էր տղամարդկանց շրջապատում խնջույքների ժամանակ, այնպես որ կնոջը ավելի դժվար է ստանալ պետական մարմիններից ֆինանսավորում, քան տղամարդուն: Միաժամանակ կնոջը հաճախ հաջողվում է ստեղծել լավ հարաբերություններ միջազգային կազմակերպությունների հետ և ֆինանսավորում ստանալ դրանցից:

Տնտեսությունը կարո՞ղ է ամեն ինչ

Ինչպես արդեն ասվել էր, գյուղերի աշխարհագրական և տրանսպորտային դիրքը ազդեցություն ունի տեղական ինքնակառավարմանը կնոջ մասնակցության վրա: Իհարկե, ինչպես և աշխահագրա-տրանսսպորտային, այնպես էլ տնտեսվարության տեսակի գործոնները անմիջականորեն կապված են տնտեսության հետ:

Տրամաբանությունը թելադրում է մտահայեցողական սխեմա, ըստ որի տնտեսության զարգացումը ապահովում է ավելի մեծ տարածք հասարակական և քաղաքական կյանք կնոջ ներգրավվածության համար: Սակայն Հայաստանում վիճակը համարյա ամբողջովին հակառակն է: Ինչքան ավելի աղքատ է համայնքը, (այդպիսին են բարձրալեռ, սահմանակից գյուղերը, որոնք կազմում են կանանց կողմից ղեկավարվող գյուղերի մեծամասնությունը) այնքան ավելի շատ է կանանց գործնական մասնակցությունը և նույնքան ավելի փոքր տղամարդկանցը:

Այս հանգամանքը կարող է տարբեր կերպ բացատրվել: Առաջին՝ աղքատ համայնքը, ավելի հարուստին հակառակ, չի կարող իրեն թույլ տալ գենդերային դերերի կոշտ բաշխման միջոցով կանանց “աշխատող ձեռքերի” կորուստը (սա վերաբերում է նաև կառավարման ոլորտին): Երկրորդ՝ ղեկավարելով աղքատ համայնքը՝ տղամարդը չի կարողանա իրականացնել իր գենդերային դերը, որը իրենից ակնկալում է լինել ընտանիքի համար ռեսուրսների վաստակող, ինչը արդեն սահմանափակում է տղամարդկանց ներհոսքը այս բնագավառ: Երրորդ՝ աղքատ համայնքներում անընդհատ տեղի է ունենում տղամարդկանց արտահոսք, այդ թվում նաև սեզոնային աշխատանքներին, ինչը նշանակում է կանանց թվի գերակայություն ցանկացած առանձին վերցրած պահին: Տղամարդկանց բացակայությունը կամ պակասը ստիպում է կանանց կատարել տարբեր տեսակի աշխատանք, այդ թվում նաև սովորական պայմաններում տղամարդկանց հետևից ամրագրվողը[46]:

Ինչպես պարզվեց այս ֆենոմենը բացառիկ չէ Հայաստանի դեպքում, այլ հակառակը՝ լայնորեն տարածված է: Համաձայն UNDP Human Development Report 2011, տնտեսապես ամենացածր զարգացվածության մակարդակ ունեցող երկրներում կանանց զբաղվածությունը ավելի մեծ է, քան տղամարդկանցը: Նույնի մասին վկայում են նաև աղքատ երկրների օրենսդիր մարմիններում կանանց մասնակցության տվյալները, որոնք համապատասխանում են մարդկային ներուժի զարգացվածության ցածր մակարդակին[47]: Լուսաբանելու համար օգտագործենք հետևյալ գծագիրը.

---

[46]См. Damien McGuinness. Armenia migration: The villages of women left behind. / BBC, Авг.10, 2011 / URL: [http://www.bbc.co.uk/news/world-europe-14386472] (анг.)

[47]См. Gender Inequality Index and related indicators / human development report 2011. P. 142 / UNDP



Շատ ավելի խոսուն է տնտեսության մեջ կանանց մասնակցությունը ցուցադրող գծագիրը:



Ինչպե՞ս է սա տեղի ունենում: Կարելի է ենթադրել, որ Հայաստանի նման երկրների տնտեսություններում, որոնք գտնվում են մարդկային ներուժի զարգացվածության բարձր մակարդակի վրա, տեղի է ունենում կապիտալի կուտակման առաջնային գործընթաց, որի ընթացքում տղամարդիկ ցուցադրում են ռեսուրսների համար պայքարի ավելի մեծ ակտիվություն, ինչի հետևանքով կանայք դուրս են մղվում հասարակա-քաղաքական և տնտեսական կյանքից: Եվ միայն հետագա երկարատև և կայուն տնտեսական աճն է ստեղծում տարածք քաղաքականության և տնտեսության մեջ կանանց ընդգրկման համար:

Սակայն սա ընդամենը ենթադրություն է: Մեր դեպքում բավարար է այն փաստի հավաստումը, որ կանանց մասնակցությունը աղքատ երկրներում կրճատվում է այդ երկրների տնտեսական աճի հետ համընթաց: Նույն կերպ կրճատվում է նաև մասնակցությունը հասարակա-քաղաքական կյանքին, եթե կանանց մասնաբաժինը խորհրդարաններում դիտարկել որպես ցուցանիշ կանանց ներգրավվածությունը երկրի սոցիալ - քաղաքական կյանքում :

Սյունիքում հարևան "նահապետական" և "մայրիշխանական" համայնքների երկճյուղավորումը

Համայնքում կանանց դիրքերի և մրցակցային քաղաքական պայքարի հնարավորության վրա ազդող արտաքին գործոնների ավելի մանրամասն համեմատության համար համեմատենք երկու գյուղ, որոնց աշխարհագրական դիրքերը մոտ են միմյանց՝ Քարահունջը և Խնձորեսկը: Մենք կնկարագրենք գործոններ, որոնք ազդեցություն են ունեցել առաջին դեպքում համայնքի ղեկավարի պաշտոնում կնոջ ընտրման վրա և ցույց կտանք, թե ինչու են կանայք պասիվ՝ երկրորդ դեպքում:

Աշխարհագրություն և տրասնպորտ

Քարահունջը գտնվում է քաղաքին մոտ (Գորիս), Խնձորեսկը՝ քիչ ավելի հեռու: Խնձորեսկը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1500 մ. բարձրության վրա, իսկ Քարահունջը մոտ 200 մ. ավելի ցածր: Սակայն Խնձորեսկը գտնվում է հարթավայրի վրա, իսկ Քարահունջը սարի լանջին, ինչով պայմանավորված է բարձրությունների տատանումը՝ 1150-ից մինչև 1350 մ. է: Չնայած ճանապարհի մոտ լինելուն՝ Քարահունջ գյուղում ճանապարհ համարյա չկա բարդ լանդշաֆտի պատճառով, իսկ Խնձորեսկ գյուղում, հակառակը, ավելի հաջողակ լանդշաֆտի պատճառով ճանապարհները անցնում են ամբողջ գյուղով և ասֆաստապատված են: Այսպիսով, Խնձորեսկը մեր տերմինաբանության մեջ հանդիսանում է հովտային գյուղ, իսկ Քարահունջը՝ լեռնային:

Տնտեսվարության տեսակ

Ընդհանուր առմամբ տնտեսվարության տիպը երկու գյուղերում էլ նույնն է՝ հողագործություն և անասնապահություն, սակայն Խնձորեսկ համայնքում հողը ավելի շատ է: Քարահունջում բնակիչները հույսը դնում են տներին հարակից փոքր տարածքների վրա, ինչը ակնհայտորեն բավարար չէ տնտեսական բարեկեցության համար: Բացի դրանից, Քարահունջը պատկանում է գյուղերի այն տեսակին, որոնք սովետական ժամանակներում կապված էին քաղաքի հետ՝ դրանց բնակիչները աշխատում էին քաղաքի գործարաններում, ինչը ապրուստի վաստակման հիմնական միջոցն էր:

Գյուղերի ժողովրդագրական հատկանիշները

Երկու գյուղերն էլ հնաբնակ են և ունեն երկար անդադար պատմություն: Սակայն այս գյուղերը ունեն տարբեր հարևանություն. եթե Խնձորեսկը անմիջականորեն սահմանակից էր ադրբեջանական գյուղերին և լարվածության ժամանակ վերածվում էր ռազմաճակատի, ապա Քարահունջը՝ բարդ լանդշաֆտի պատճառով, այդպիսի խնդիրների առջև չէր կանգնում: Հետաքրքիր է, որ Քարահունջում մինչև հիմա պահպանվել է դաշնակների ջոկատների հետ պայքարում զոհված տեղական կոմունիստների արձանը, իսկ նշված անունների թվում կան նաև կանայք: Քարահունջը դարձել էր "կարմիր" գյուղ, ինչը Հայաստանի համար բավականին հազվագյուտ երևույթ էր և այդպիսով ավելի ընկալունակ էր կոմունիստական գաղափարների հանդեպ՝ կանանց ազատագրման վերաբերյալ: Իսկ Խնձորեսկում գոյություն ունի Ղարաբաղյան պատերազմի ժամանակ զոհվածներին նվիրված արձան: Խնձորեսկի ավանդական նահապետական ապրելակերպը, ինչպես երևում է, պահպանվել է շատ ավելի լավ, քան մեր կողմից այցելված մյուս գյուղերում:

Համայնքի ղեկավարը

Քարահունջ համայքնի ղեկավարը երիտասարդ կին է, ինչը բավականին տարօրինակ է այնպիսի գյուղերի համար, որտեղ ընտրություններում կին է հաղթել: Մինչ 2002թ.-ին ընտրվելը նա գործարար էր, ուներ խանութ, լավ ծանոթ էր գյուղի խնդիրներին: Բնակիչների վկայությամբ նա ունի բավականին շատ բարեկամներ, որոնք իրեն օգնել են ընտրվել համայնքի ղեկավար: Առաջին ընտրություններին նա ուներ 6 մրցակից, ապա դրանք քչացան, իսկ վերջինի ժամանակ մրցակիցներ չկային: Խնձորեսկի համայնքի ղեկավարը Ղարաբաղյան պատերազմի կամավոր է, նա հայտնի է հենց որպես "ֆիդայի": Նա հակառակորդ չուներ ընտրություններում, համայնքը գլխավորում է 1999թ.-ից: Երկուսն էլ ունեն բարձրագույն կրթություն:

Քարահունջ համայնքի ղեկավարը զբաղվում է առաջին հերթին հումանիտար ծրագրերով, ինչպիսիք են դպրոցի, մանկապարտեզի, կանանց ակումբի, երիտասարդական կենտրոնի վերականգնումը և այլն: Խնձորեսկում կառուցվել է ջրմուղ, ինչը որոշակի չափով արտացոլում է համայնքի ղեկավար կանանց և տղամարդկանց միջև առաջնահերթությունների ավելի համընդհանուր տարբերություն:

Տնտեսություն

Խնձորեսկը շրջակայքում ամենահարուստ գյուղն է, շատ ընտանիքներ ունեն ավտոմեքենաներ, գյուղում բավականին շատ է ռազմավար գյուղատնտեսական տեխնիկան, մինչդեռ Քարահունջում այդ ամենը չկա: Խնձորեսկում մեկ տնտեսություն ունի 5 կով, Քարահունջում՝ 2: Այսպիսով Խնձորեսկը նշանակալիորեն ավելի հարուստ գյուղ է, իսկ Քարահունջը՝ շրջանում ամենաաղքատներից մեկը:

Կինը- գյուղական համայնքի ղեկավար

Վերը նշված են արտաքին գործոններ, որոնք ազդում են կնոջ ընտրվելու հնարավորության վրա: Սակայն իր ընտրվելու հնարավորության վրա ազդում են նաև անձնական արժանիքները և այլն: Դրանցից մի քանիսը, որոնք հաջողվել է ստանալ տարբեր աղբյուրներից և համակարգել, ներկայացնում ենք ստորև.

Դիմանկար

Չնայած գյուղերի աշխարհագրական բավականին մեծ ցրվածությանը և տարբեր համգամանքների, որոնք օգնել կամ խոչընդոտել են այդ հաղթանակին՝ նրանք ունեն բազմաթիվ ընդհանուր հատկանիշներ:

Տարիքը և ամուսնական կարգավիճակը

Համայնքի ղեկավար կանանց միջին տարիքը մեծ է տղամարդկանց միջին տարիքից մոտ 10 տարով: Բանն այն է, որ տղամարդուն ընտրվելու համար բավական է լինել 30-ն անց, իսկ համայնքի կին ղեկավարների համար միջին տարիքը 45 է: Կնոջից ակնկալում են ավելի հարուստ սոցիալական կապիտալ, քանի որ 30 կամ նույնիսկ 40 տարեկան կնոջը

համայնքում կարող են ընկալել ոչ պատշաճ կերպով, համարել չափից շատ երիտասարդ ու անփորձ և ընդհանուր առմամբ աշխատանքի համար ոչ պիտանի[48]:

Իր ամուսնական կարգավիճակով համայնքի ղեկավար կինը շատ չի տարբերվում իր համագյուղացիներից: Նա, միանշանակ, ավելի կրթված է, նա կարող է լինել բարձրագույն կրթությամբ միակ կինը, եթե այդ գյուղը շատ փոքր է: Կրթությունը նա, որպես կանոն, ստացել է Երևանում, գյուղատնտեսական համալսարանում, ինչից հետո վերադարձել է հարազատ գյուղ կամ մոտակա քաղաք:

Հաճախ նա ամուսնացած է և ունի 2-3 երեխա, սակայն հանդիպել են թե՛ առանց ամուսնու և երեխաների, թե՛ 8 երեխայի մայր կանայք: Բայց, քանի որ նրա միջին տարիքը 55 է, նա ունի համեմատաբար ավելի շատ ազատ ժամանակ, քանի որ, տարիքից ելնելով, իր երեխաներն արդեն ամուսնացել են, կամ լքել են գյուղը:

> *“... [Ե]ս գտնում եմ, որ մինչև կնոջը չազատենք սոցիալական այդ վիճակից, այդ դժվար կյանքից, ... գյուղի կանանց մասին եմ խոսում, ներգրավել նրանց քաղաքական կյանքում դժվար է: Ինչ առումով, հիմա էդ կինը, ինքը պետք է մտածի կովը կթի, ինքը պետք է մտածի իր տնամերձ գոնե հողը մշակի, ինքը պետք է մտածի թե այդ կաթը հանձնի, մշակի, ինքը մեծ, սոցիալական ծանր վիճակում է գյուղի կինը, դրա համար ինքը շատ պասիվ է այդ քաղաքական կյանքից:”*
>
> **Ցաղդան համայնքի ղեկավար, Վալենտինա Կերխանաջևա**

Նա կարող է լինել մեծ ընտանիքի կամ ցեղի անդամ, որն իր տեղն է գրավում համայնքի հասարակական պաշտոնակարգության մեջ, բայց դա պարտադիր չէ: Հաճախ դա ակտիվ կին է, որը, չնայած խոչընդոտների, հասնում է իր նպատակներին: Դրա համար նա պետք է իրականացնի տղամարդու գենդերային դերը: Այսպես, հարցազրույցին մասնակցողների շրջանում հաճախակի էր “կան տղամարդու պես կանայք, իսկ կան կնոջ պես տղամարդիկ” պատասխանը:

<u>Նախապատմություն</u>

Իր նախորդ գործունեության տեսակը կարող է լինել բազմազան: Հաճախ առաջադրվում են ավագանու աշխատակիցներ, որոնք արդեն զբաղվում են ինքնակառավարմամբ, օրինակ, գյուղական վարչակազմի քարտուղարներ: Հաճախականությամբ երկրորդը դպրոցի ուսուցիչներն են: Հաճախ նրանք համայնքում հարգված մարդիկ են, որոնք ունեն բարձրագույն կրթություն, ինչը կարևոր է պաշտոնին առաջադրվելու համար:

---

[48]Մեծ քաղաքում առաջին կին քաղաքապետը դարձավ Քեթրին Տրոտմանը (Catherine Trautmann), որը ընտրվեց 1989թ-ին, հետագայում Ֆրանսիայի մշակույթի նախարար և Եվրախորհրդի պատգամավոր: Մեզ հետ հարցազրույցում նա հիշեց, որ 1989 թ-ին, երբ նա 38 տարեկան էր, մեծամասնությունը համոզված էր, որ նա չի հաղթի, որովհետև ա) երիտասարդ է, բ) կին է, գ)սոցիալիստ է: Իսկ հաղթեց ընդդիմադիր քվեարկության արդյունքում:

Քաղաքական պայքարը իր համար չունի այնպիսի նշանակություն, ինչպես տղամարդու համար՝ նա հաճախ ամաչում է մտնել քաղաքական պայքարի մեջ և դրան մասնակցում է հրապարակայնորեն, մինչդեռ տղամարդիկ հաճախ փորձում են հարցը տեղափոխել ոչ պաշտոնական մթնոլորտ: Կինը կարող է հաղթել այնտեղ, որտեղ ընտրությունները անցկացվում են մրցակցայնորեն, բայց ել նրան պետք է բարեկամների օգնությունը՝ քվեարկման պահին իր կողմնակիցների մոբիլիզացիայի համար:

Համայնքների ղեկավար կանանց մեծամասնությունը իրենց համայնքներում ունեն բարձր հեղինակություն, և հիմնականում վերընտրվում են առանց դժվարությունների: Նրանցից ոմանք այս պաշտոնը զբաղեցնում են դրա հիմնադրման պահից, մինչդեռ մյուսներին հաջողվում է պաշտոնում մնալ միայն մեկ ժամկետ:

Ընդհանրացում, ընտրման ուղի և հետագա գործունեություն

Կանայք ընտրողներին են ներկայացնում իրենց ծրագիրը և աշխատում են այն հնարավորինս իրականացնել: Եթե համայնքի ղեկավարի պաշտոնում գտնվող տղամարդկանց նպատակը խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի (որոնք սահմանափակված են ֆինանսական հնարավորություններով) իրականացումն է, ապա կանանց համար կարևորագույնն է հումանիտար ոլորտում ծրագրերի իրականացումը: Կանայք առաջնային ուշադրություն են դարձնում կրթությանը՝ դպրոցներին և մանկապարտեզներին, մյուս քայլը հիմնականում համայնքի բնակիչների ժամանցի կազմակերպումն է (ակումբի, երիտասարդական, կանանց կենտրոնի ստեղծումը, սովետական մշակույթի տան վերականգնումը, համահամայնքային իրադարձությունների անցկացումը և այլն) և հետո նոր ենթակառուցվածքային ծրագրերի իրականացումը, ինչպիսիք են ճանապարհների ասֆալտապատումը, գազաֆիկացումը և ջրմուղի անցկացումը:

> *“...Ես վերանորոգել եմ մշակույթի տունը, որտեղ անցկացվում են տարեկան իրադարձություններ, ընդգրկել եմ դպրոցը, մանկապարտեզը, ստեղծել եմ կոլտնտեսություն, վերանորոգել եմ փոստի շենքը, իմ վաստակն եմ համարում միջհամայնքային խաղաղությունը...*
>
> *Մնում է կառուցել գազամուղը (արդեն արվում է) և նորմալ ճանապարհ”*
>
> **Յաղդան համայնքի ղեկավար, Վալենտինա Կերխանաջևա**

Կանանց հումանիտար կողմնորոշումը ակնհայտ է նաև այլ գյուղերում:

“...[Հ]ա, ես գիտեմ, որ կան հարցեր, որ չեն ասի տղամարդկանց, ավելի լավա էդ հարցերով կնոջը դիմի: Էս վերջերս Դավթյան Ելենային դիմել էր են հարցով, որ միանվագ օգնություն չեին տվել, Ելենան ասեց ինձ , մեն միասին պատրաստեցինք թղթերը, ես նույնիսկ միջնորդեցի ասեցի եթե միանվագ օգնություն տալու լինեք, ես կնոջը տվեք, այսինքն կին կա, որ կնոջ հետ ավելա լավա լեզու գտնի քան տղամարդու:”

Ազնվաձոր համայնքի ղեկավար, Սաշա Շահնազարյան

Ընտրությանը կնոջ մասնակցության որոշման ընդունման ընթացքը, որպես կանոն, դժվարին է, քանի որ նախատեսում է տղամարդու գենդերային դերի ընդունում: Համայնքի ղեկավարի կողմից ակնկալվում է նաև ակտիվ մասնակցություն ոռոգմանը և դաշտային այլ աշխատանքներին, ինչը հաճախ կանանց ուժերից վեր է:

Ընտանիքը ընտրություններում կարող է լինել ինչպես արժեքավոր օգնական, այնպես էլ խոչընդոտ: Հարցմանը մասնակցած տղամարդկանց մոտավորապես կեսը դեմ է արտահայտվել նրան, որ իրենց կանայք թեկնածություն առաջադրեն համայնքի ղեկավարի պաշտոնին, մյուս կեսը ոչ մի պատճառ չուներ դեմ լինելու և պատրաստ էր նրանց օգնել: Գործնականում, համայնքի ղեկավար բոլոր կանայք օգտվում են իրենց ընտանիքի աջակցությունից, առաջին հերթին՝ ամուսնու, հաճախ՝ տղաների և ավելի հեռավոր բարեկամների:

Խոշոր համայքներում ծավալվում է ձայների և ընտրվելու հնարավորության համար կոշտ մրցակցություն, և հաճախ կանայք այսպիսի անդրդելի մարտին պատրաստ չեն: Իրավիճակը վատթարանում է նաև նրանով, որ փոքր համայքներում դպրոցի ուսուցիչները նկատելի և հայտնի մարդիկ են, իսկ խոշոր համայնքներում, մանավանդ քաղաքներում, ճանաչելի լինելու համար հարկավոր է լինել հրապարակային քաղաքական գործիչ: Իսկ, քանի որ քաղաքների մակարդակում ճանաչված կին քաղաքական գործիչներ գրեթե չկան, դա առաջացնում է փակ շրջան:

Ինչպես արդեն ասվել է, կանանց համար իրենց թեկնածությունը առաջադրելու դրդապատճառ կարող է լինել ոչ միայն աշխատանքի տեղավորումը, այլ նաև համայնքում, կյանքի մակարդակը բարձրացնելով, ինչ-որ բան փոխելու ցանկությունը, մինչդեռ տղամարդկանց համար դա ավելի հաճախ աշխատանքի տեղավորվելու, գումարներին տիրելու և իշխանություն ստանալու միջոց է:

Խորհուրդներ

Կարճաժամկետ հեռանկարով.

1. Խորհուրդների և համայնքների ղեկավարների համար հիմնական կադրային ռեզերվը դա գյուղական վարչակազմի աշխատակիցներն են (համայնքի ղեկավարի տեղակալ, քարտուղար, հաշվապահ), ավելի քիչ քանակությամբ՝ դպրոցը և բուժկետը: Համապատասխանաբար, կարելի է լավ արդյունքներ ստանալ սահմանված նորմերով կամ այլ միջոցներով *համայնքի ղեկավարների կին տեղակալների*, ինչպես նաև համայնքի ղեկավարների օգնականների և այլոց թվի ավելացման դեպքում:
2. Մեր տվյալների համաձայն որոշ կանանց դեպքում համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվելու գործում առանցքային դեր է խաղացել *ընտրարշավի կազմակերպմանը ցուցաբերած աջակցությունը*: Կանայք այդպիսի օգնության ետևից իրենք են դիմել կանանց տեղական ՀԿ-ներ: Սակայն եթե Հկ-ները, ընդհակառակը, չսպասեն կանանց նախաձեռնությանը, այլ իրենք գտնեն առաջնորդի ներուժով կանանց և նրանց արշավի կազմակերպման գործում առաջարկեն օգնություն և խորհուրդ, դա կլինի ավելի արդյունավետ:

3. Տեղական մակարդակում առաջնորդության համար ամենահամապատասխան թեկնածուներն են *40-ից ոչ երիտասարդ, բարձրագույն կրթությամբ և համայնքում հարգված կանայք*: Երբեմն այսպիսի կնոջը պետք է միայն իր թեկնածությունը առաջադրելու մասին խորհուրդ, իսկ հետագայում՝ հաջողակ ընտրարշավ անցկացնելու համար խորհրդատվություն:

4. Տարածքային կառավարման նախարարությունում *կնոջ բարձր պաշտոն զբաղեցնելը* համայքների համար կլինի կարևոր ազդանշան: Նա ոչ մի դեպքում չպետք է “գենդերային հարցերի” պատասխանատու լինի: Ամենալավը սոցիալական, զարգացման հարցերն են:

5. *Տարբեր մարզերում և գյուղերում* քվոտայացումը և կանանց մասնակցությունը խթանելուն ուղղված այլ միջոցները պետք է անցկացվել *տարբեր կերպ*՝ օգտվելով մեր տվյալների պահոցից կամ մեզ խնդրելով անել դա. ինչքան ավելի հեռու Երևանից, ինչքան ավելի աղքատ և սահմանին մոտ, այդքան ավելի բարձր կարելի է դնել քվոտան: Գյուղերում, որտեղ ապրում են փախստականները, կամ ընդհանրապես 1940թթ-ից հետո հիմնված, էթնիկական և կրոնական փոքրամասնություններով բնակեցված գյուղերում միջոցները կլինեն ավելի արդյունավետ:

6. Քանի որ կանայք ավելի հաճախ հաջողության են հասնում չափերով փոքր համայնքներում, *համայնքների խոշորացումը իր մեջ պարունակում է տեղական մարմիններում կանանց ներկայացուցչության կրճատման վտանգը*: Կանանց կողմից ղեկավարվող համայնքների խոշորացման դեպքում պետք է նրանց սատարել խոշորացված համայքի ընտրություններին առաջադրել իրենց թեկնածությունը: Բացի դրանից, կինը կարող է դառնալ խոշորացված համայնքի ղեկավարի տեղակալ, քանի որ համայնքի ղեկավարների կին տեղակալների թվի ավելացումը նույնպես ժամանակի ընթացքում կբերի կին ղեկավարների թվի ավելացմանը:

7. Խոշորացման դեպքում շատ գյուղերում կփակվեն մանկապարտեզներ և դպրոցներ, իսկ քանի որ այնտեղ հիմնականում կանայք են աշխատում, պետք է սատարել *աշխատանքից ազատված կանանց մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին*:

8. Կանանց հաջողակ ղեկավարման օրինակները *պետք է գովազդել, տարածել և սատարել*: Ինչքան մեծ թվով մարդիկ իմանան այդ մասին, այդքան մեծ թվով կանայք կորոշեն մասնակցել ընտրություններին: Բացի դա, ընդհանրապես պետք է գովազդել դեպքեր, երբ տեղական կառավարությանը հաջողվել է բարելավել գյուղի կյանքը և լուծել վերջինիս խնդիրները, մանավանդ կանանց (նույնիսկ ոչ ղեկավար) ակտիվ մասնակցությամբ:

9. Կանայք հաղթում են միայն արդար ընտրություններում: Համապատասխանաբար, այն համայնքներում, ուր թեկնածուների թվում կա կին, *ընտրարշավի ընթացքին և քվեարկությանը հավելյալ հսկողությունը* կնպաստի կին թեկնածուի հաղթանակին, իհարկե այն դեպքում, երբ նա մրցակցության իրական, ոչ թե կեղծ մասնակից է:

10. Այն կանանց, որոնք արդեն ընտրվել են վարչակազմի ղեկավարների պաշտոններին և տեղական մարմիններ պետք է օգնել ՀԿ-ների կամ/և պետական մարմինների ուժերով, առաջին հերթին խորհուրդներով, կապերի բարելավմամբ և այլն:

Երկարաժամկետ հեռանկարով.

1. Կանանց մասնակցությունը ինքնակառավարմանը կմեծանա, եթե տեղական խորհուրդները իրականացնեն այն իշխանական լիազորությունները, որոնք նրանք ունեն թղթի վրա, մանավանդ կապված *ֆինանսների բաշխման և ծախսերի կառավարման* հետ: Ինչքան ավելի քիչ համայնքի ղեկավարը զբաղվի փողերի բաշխմամբ, այդքան ավելի մեծ հավանականությամբ այդ պաշտոնը կզբաղեցնի կին:

2. Համայնքի ղեկավարը կախված է մարզային վարչակազմից, որը հաճախ սատարում է իր “սեփական” թեկնածուներին, և որը իրավունք ունի նախաձեռնել համայնքի ղեկավարի հրաժարականը, իսկ կանայք չունեն մարզպետի և իր աշխատակազմի հետ լավ հարաբերություններ պահպանելու համար այդքան անհրաժեշտ խնջույքի հմտություններ: Համայքնի ղեկավարների հեռացումը մարզպետից այս պաշտոնը կանանց համար կդարձնի ավելի հասանելի:

3. Կանայք հաղթում են միայն արդար ընտրություններում: Հարկավոր է տեղական մակարդակի վրա ստեղծել մրցակցային միջավայր: Դրա համար պետք է մեծացնել ավագանու խորհրդի ազդեցությունը և փոքրացնել համայնքի ղեկավարի ազդեցությունը. հիմա հաճախ համայքնի ղեկավարն է որոշում, թե ով կընդգրկվի խորհրդում և խորհուրդը ենթակա է նրան:

4. Գյուղում ակտիվ կանայք ավելի հաճախ գնում են ՀԿ-ներ, և ոչ թե քաղաքականություն կամ տեղական ինքնակառավարում: Սատարելով կանանց մասնակցությունը ինքնակառավարմանը, մենք օգուտ կբերենք և ՀԿ-ներին, և հասարակությանը: ՀԿ-ների աշխատակիցները տեղական իշխանության կադրայի ռեսուրս են:

Կանայք Հայաստանի տեղական ինքնակառավարման մեջ

Կովկասի Ինստիտուտի № 6 հետազոտական գրառումներ, 2011թ. դեկտեմբեր

Հեղինակ: Հրանտ Միքաելյան

Հոտազոտական խումբ: Էլլա Կարագուլյան (նյութերի հավաքում, մշակում և վերլուծություն), Զարուհի Հարությունյան, Մարգարիտա Զախարյան (նյութերի հավաքում և մշակում):

Ծրագրի ղեկավար – Նինա Իսկանդարյան

Գիտական խմբագիր – Ալեքսանդր Իսկանդարյան

Հովանավորներ: ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր (UNDP), Կովկասում Հայնրիխ Բյոլլ Հիմնադրամ

Երախտագիտություն: Հովանավորներին, ինչպես նաև Կովկասի Ինստիտուտի աշխատակիցներին և կամավորներին, որոնք համբերատար տպում էին հարցազրույցների սղագրությունները, նախագծի բոլոր մասնակիցներին, սոցիոլոգներին, որոնք Հայաստանի ամենահեռավոր անկյուններում անցկացրեցին մոտ 100 հարցազրույց:

Կովկասի Ինստիտուտ, 2002-2011

Եզնիկ Կողբացի, 39
0010 Երևան
Հայաստանի Հանրապետություն

Հեռ: (374 10) 540631, 540632
Ֆաքս: (374 10) 540632
Էլ. փոստ: contact@c-i.am
Կայք: www.c-i.am